

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԿԻԾ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԳԱՂԱՔԱԿԱՆ

ՓՈԽԱՆՑՈՒՄԻ ԹՈՒԱԿԱՆ

Թե՛ Պոլսէն հասած լուրերը, թե՛ Եւրոպա ինչ ինչ շրջանակներէ ստացուած տեղեկութիւններ կը յուսադրեն Հայոց համար դէպի լաւ փոխանցումի թուականի մը սկզբնաւորութիւնը: Սեպտեմբեր 6էն ի վեր Թիւրքիոյ մայրաքաղաքը տակնուվրայ ընող ձերբակալութիւնները, բանտարկութիւնները, աքսորումները անգամ մը եւս կը հաւաստեն թէ տասը տարի առաջ յուլիս 15ին յանկարծ պայթած խռովակոծ տազնապը անդադրում յարատեւութեամբ կը շարունակէ, առանց մօտալուս հանդարտութեան մը ակնկալութիւնը ընծայելու թիւրք իշխանութեան ու պոլսեան եւրոպացիներուն:

Խորհող անձնաւորութիւններ, թիւրք թէ եւրոպացի, դիտել կուտան որ ահա տասը տարի է օսմանեան իշխանութիւնը մեղմազոյն բռնութիւններէն մինչեւ ահեղագոյնները ի գործ դրաւ հայ ժողովուրդը զսպելու համար: Տազնապը սակայն ո՛չ բանտերու մէջ փոտելով անհետացաւ, ո՛չ արիւնի մէջ խեղդամահ կորսուեցաւ, այլ յարածուն ուժգնութեամբ կը շարունակէ իր յառաջխաղացութիւնը, թէև հանդարտընթացիկ: Ու նոյն իսկ այդ հանդարտութիւնը կ'ապացուցանէ տազնապին զօրութեան օրջանութիւնը: Ինչպէս անհատները նմանապէս եւ ժողովուրդները երբ մեծազոյն ուժի մը գէժ կեանքի մարտնչումը կը մղեն առանց մեծազոյն աղմուկի, առանց խռովայոյզ իրարանցումի, այլ ինքնամփոփ արիւթեամբ, անոնք կամքի ապառաժներ են զոր բռնութիւնը իր պատուհաններովը կարող չէ շուտով փշրել, շախջախել, անհետացնել:

Ո՛ր է կուռի մէջ յաղթանակի առաջին երաշխաւորութիւնը յարատեւութիւնն է: Հայ ազգը ահա տասը տարի է կը մաքառի ընդդէմ ուժի մը որ ահեղապէս հզօր է, վասն զի կազմակերպեալ մարմին մը կը ներկայացնէ. զօրք, դրամ, զէնք, դիւանագիտութիւն ամէն ինչ ունի օսմանեան իշխանութիւնը, եւ սակայն մեր մաքառումին վախճանը դեռ մօտալուս չերևնար: Այս ան-

ընկճելի յարատեւութիւնը կը պարտաւորէ թէ Թիւրքիոյ կառավարութիւնը, թէ Եւրոպան մտածել թէ հայկական տազնապը արհեստական միջոցներու ստեղծագործութիւնը չէ, եւ ո՛չ ալ բանաստեղծական երազանքներու փրփուրը որ անէացման դատապարտեալ է: Հայ ժողովրդին նման խելօք, հանդարտաբարոյ ցեղ մը երբ անողորքելի տոկունութեամբ տասը տարի շարունակ կը կուռի, ըմբոստանալով կրակին, ուրին, հրացանին, թալանին, անբուստին դէմ, հարկ կ'ըլլայ վերջապէս ընդունել թէ հայ ազգին ըմբոստացումը պատահական հիւանդութիւն մը չէ, շղարին գրգռումէ մը յառաջ եկած:

Կայսրութեան մը համար չափազանցօրէն ծանր է իր մայրաքաղաքէն շարունակ յեղափոխական շարժումի հեռագիրներու տեղատարափ մը տեսնել եւրոպական մասուլիս մէջ: Ուրիշ ոչ մէկ պետութիւն այսպիսի արարիւնակ վիճակի մատնուած է: Ու աս տասը տարի է: Տազնապին մօտաւոր վախճանը ոչ ոք կ'ընդհարէ: Եւ հիմակ թիւրք կամ Թիւրքիոյ բարեկամ հեռատես մտքեր սկսած են լրջօրէն վրդովիլ, եւ կ'ըմբռնեն թէ հայկական տազնապը հանդարտեցնելով կայսրութեան ապագան ապահովելու համար, բանտի ու կոտորածի քաղաքականութիւնը հարկ է այլ ևս ոչ միայն անպէտ այլ և վնասակար համարիլ:

Տակաւին կարող չենք որոշապէս գիտնալ թէ Թիւրքիոյ Հայոց համար նպաստաւոր խորհուրդները ինչ ընդունելութիւն պիտի գտնեն ձեռնհաս շրջանակներու մէջ: Առ այժմ կը դիտենք միայն, եւ մեր ժողովրդին միտքը կը շարունակենք լուսաբանել այն ուղղութեամբ որմէն առաջ նորոգուեցանք երեք տարի է:

Մեր գլխաւոր առաջադրութիւնը եզած է հայ ժողովուրդը իրականութեան հետ դէմ առ դէմ բերել, որպէս զի կատարեալ դիտակցութեամբ շարժի եւ գործէ: Կարգ մը սխալներ կան որոնք եթէ իբր ճշմարտութիւն ընդունուին կրնան ազգը յուսահատութեան մղել: Այդ շարիքին առջեւ անոնք ջանացինք, եւ կը յուսանք յաջողած ըլլալ: Այսպէս, անհերքելի փաստերով ապացուցինք թէ Հայաստանի արդի կացութիւնը ոչ թէ վերջին տարիներու շարժումին հետեւանքն է, ինչպէս կուզեն հաւտացնել կարգ մը անգէտ տկարներ, այլ ընդհակառակ կը բնականօրէն յառաջ եկած է նախկին կացութենէ մը

որուն ծանրութիւնը բացարձակօրէն հաստատուած է Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովներուն 1871 եւ 1876ի Տեղեկագիրներովը: Նմանապէս մեծակալ սը-խալ մըն է կարծել թէ թիւրքիոյ վարչական մարմինն փո-փոխութեամբը կրնայ բարեփոխուիլ նաև հայկական նա-հանգներուն վիճակը: Պատմական անցքերը կը հաստա-տեն, ինչպէս ցոյց տուինք, որ հեզահամայր բնաւո-րութեան համբաւ վայելող սուլթաններու օրովն ալ Հա-յաստան աւելի երջանիկ չէ եղած, եւ ուրիշ քրիստոն-եայ ժողովուրդներ ալ ան ատենները այնպէս կոտորուե-րն ինչպէս հիմակ հայերը: Վարչական դրութեան փո-փոխութեամբն է որ Հայաստան կրնայ ապահով վիճակ մը ունենալ, առանց նկատողութեան առնելու երկրին միապետին անձնաւորութիւնը. օրինակը կուգայ Ղիբա-նանէն: Իսկ հիմակ ալ սուլթանին յոբելեանին առթիւ Եւրոպայի շնորհաւորական արտայայտութիւնները իբր հայկական դատին աննպաստ իրողութիւն մը կը շա-հագործուի: Մեր նախորդ թուով յաջողեցանք, իրակա-նութիւնը պարզելով, հերքել եւ այդ սխալ ըմբռնումն ալ:

Հիմակ մեզի կը մնայ հետզհետէ աւելի ուշադիր դիտել թիւրքիոյ վարչական բարձրագոյն շրջանակը, որ-մէն մեծապէս կախում ունի բարենորոգումներու գոր-ծադրութեան գաղափարին յաղթանակը կամ պարտու-թիւնը:

Փոխանցումի ժամանակի մը մէջ ենք, և մենք հա-յերս որպէս զի սխալ քայլ մը չառնենք, պարտաւոր ենք առանց ո՛ր և է նախապաշարման դիտել, քննել անձնա-ւորութիւնները, գաղափարները, ձգտումները: Նախա-պաշարում մը համակրական ըլլայ թէ հակակրական միշտ վտանգաւոր է կոռուի պահուն. զգացումը մտքերնուս տե-սութեան պայծառութիւնը պղտորելով անհնարին կ'ընէ մեր թշնամիին զօրեղ ու տկար կողմերը որոշել, եւ ըստ այնմ պատրաստել ռազմական յատակագիծը:

Մաս մը Հայոց համար քաջակորով անձնուէր հայ-րենասէրը ան է որ փրփրերախ բերնով թունալից ա-ծականներու ժայթքում մը կը տարափէ եւրոպացիին գլխուն: Հայը որ Վիլհելմ կայսեր հասցէին խժգժայուր հայհոյութիւններ կը թոցնէ—բնականաբար ինչքան հը-նար է լայնատարած անջրպետ մը ձգելով անոր կայս-րութեան եւ իր բնակած երկրին սահմաններուն միջեւ, հայը որ բռունցքը Սուլթանիին ցոյց կուտայ,—հայերին մէջէն, այդ հայերը ամենայն անկեղծութեամբ կը հա-ւատան թէ իրենց ազգին անգնահատելի ծառայութիւն մը մատուցած են: Հայկական դատին յաջողութեանը հա-մար մեզի աւելի օգտակար է հանդարտօրէն սորվիլ թէ մինչ Պիզմարը կը յայտարարեր որ Արևելեան խնդիրը գերման գինուորի մը ոսկրոտին չէր արժեր, ինչո՞ւ գեր-ման կայսրը իր հոգիին բոլոր ուժովը Արևելեան խնդ-րին փարած է: Կամ թէ. Վիկթորիա թագուհին որ 1895ին կը մերժեր ընդունիլ սուլթանին կողմէն Անգ-

լիոյ գահաժառանգին պատուանշան մը բերելու համար ճամբայ ինչպիսի վրայ եղող պատուիրակութիւնը, վասն զի քանի մը հարիւր հայ ջարդուեր էին Սասուն, հիմակ այդ միևնոյն թագուհին ինչո՞ւ սուլթանին յոբելեանը կը շնոր-հաւորէ ինքնագիր ուղերձով և իր նաւատորմին լուսավա-ռութեամբը, երբ կոտորուած քրիստոնեաները փոխանակ հարիւրի ա՛լ բիւրներով կը համրուին:

Ու կայ սուլթանը, որուն անուանը հայ մը—Եւրո-պա նստած—որքան աւելի խոշորկէկ ածական մը կցէ այնքան աւելի խորին համոզում կունենայ թէ Հայաս-տանի բարեկարգութեանց գատին հզօր մղում տուած է: Շատ հաւանական չէ որ Եւրոպայի վեհապետներուն ականջը հասնի հայոցմէ իրենց ընծայուած նախաաա-կան ածականները: Իսկ սուլթանին համար կրնանք ընդունիլ թէ կլատսթոնի տիեզերահաշակ թշնամանքէն յետոյ, այլ եւս հայու մը կողմէն ո՛ր և է պարսաւանքի յայտարարութիւն գերակշիռ ազդեցութիւն ունենալու սահմանուած չէ: Ու յետոյ, շատոնց է որ թիւրքիոյ մէջ ըսուած է թէ «թագաւորին ետեւէն շատ բան կ'ըսեն»: Աւանդութիւն մը որ ենթադրել կուտայ թէ հին ատեն-ներն ալ սուլթանները իրենց հպատակներուն հետ չա-փագանցօրէն փափկասրտութեամբ վարուած ըլլալու չեն: Մամուլը հայ դատին աւելի օգտակար ծառայութիւն մը պիտի մատուցանէ ժողովուրդը լուսաւորելու աշխատե-լով քան թէ զայն հայհոյելու վարժեցնելով:

Ու պարտաւոր ենք աւելի քան երբեք ասկէ ետքը հիմնովին ուսումնասիրել թիւրքիոյ վարիչները, պետական քաղաքականութիւնը, իսլամական գաղափարները: Էն նպաստաւոր պայմաններու մէջ իսկ, Եւրոպացին մեզի համար աջակից մը միայն կրնայ ըլլալ, բայց մեր գործը նախ եւ առաջ թիւրքիոյ վարչապետին, վարիչներուն և իսլամ ժողովուրդին հետ է: Թրքագիտութիւնը մեզի ա-ւելի հարկաւոր է քան եւրոպական կեանքին պատկանող ուրիշ ո՛ր և է ուսումնասիրութիւն:

Փոխանցումի թուականի մը սկզբնաւորութիւնը տես-նելու յոյօք կրնանք ունենալ ըսինք: Պոլսէն հասած լու-րերը կը հաւաստեն թէ Երլուզի երկու կուսակցութիւն-ներէն մէկը կը հետամտի սուլթանին բացատրել Հայոց նպաստաւոր քաղաքականութեան մը թիւրքիոյ ընծայե-լիք առաւելութիւնները: Միւս կուսակցութիւնը հակառակ ուղղութեամբ կ'աշխատի, ջանալով խոշորոտ հանդիսա-նալ եւրոպական միջամտութեամբ կամ թրքական նա-խաձեռնութեամբ Հայոց ո՛ր և է գոհացում տալու քաղա-քականութեան:

Երլուզի երկու կուսակցութիւններէն մէկը անգլիասէր ճանչցուածն է, միւսը ռուսասէր: Երկուքն ալ վաղնջուց ժամանակներէ հետէ գոյութիւն ունին: Ոչ շատ աւելի ետ երթալով եթէ սուլթան Ազիզի իշխանութեան օրերը միայն վերադառնանք, երկու կուսակցութիւնները իրարու դէմ կը գտնենք Պապը—Ալին. անգլիասէրը պարագլուխ

ունենալով Միտհատ փաշան, ոմաստերը՝ Մահմուտ Նէտիս փաշան. առաջինին մտերիմ խորհրդականը Օտեան, երկրորդինն ալ հայ մը։ Սուլթանը տարուբեր վիճակի մատնուած էր. որքան ստեն որ Ալի փաշան կ'ապրէր թիւրքիոյ միապետը կատարելապէս վտահ էր թէ իր կայսրութեան արտաքին ու ներքին քաղաքականութիւնը ապահով ձեռքերու մէջ կը գտնուէր։

Ընդհանուր հանգամանքները հզօրապէս կը նշանակէին Ալի փաշային քաղաքականութեանը յաջողումին, խորիմի պատերազմէն յետոյ Ռուսիա ինքնամփոփումի հարկին սէջ գանուելով կարող չէր թիւրքիոյ գէմ թըշնամական ծրագիրները փափաղին համեմատ զործադրել. հողին ներքեւ կամացուկ կամացուկ ականներ պատրաստելու կը հետամտէր։ Ֆրանսա և Անգլիա, պաշտպան թիւրքիոյ, իրենց հովանաւորութեանը ներքեւ անցոյթ կ'ապահովէին օսմանեան կայսրութիւնը որուն առաջնորդներն էին Քէշիտ, Ֆուատ, Ալի փաշաներու նման տաղանդաւոր զիւանագէտներ։ Բայց Ֆրանսայի 1870ի դժբաղդութիւնը, Ռուսիոյ հզօրացումը, Ալի փաշայի մահը, կարող թիւրք զիւանագէտներու պակասութիւնը ծանր տագնապի մը մատնեցին սուլթան Ազիզը, ինքնիրենը իշխանութիւն վարելու անկարող վեհապետ մը։ Սուլթանը մերթ այս մերթ այն կողմը կը հակէր զեւպանական և պալատական մեքենայութիւններու ազդեցութեան ներքեւ։ Վերջապէս իկնաթիւք զօրավարը կարողացաւ պերզանցօրէն ճարպիկ քաղաքականութեամբ մը սուլթանը բողբոջին իրեն զրաւել, և Մահմուտ Նէտիս փաշան սատրագամ նշանակել տալ։ Այդ օրէն թիւրքիոյ սուլթանը Ռուսիոյ անձնատուր եղած էր, իկնաթիւք պարագաներէն սքանչելապէս օգտուեցաւ, և յաջողեցաւ թիւրքիոյ սնանկութիւնը հրատարակել տալ, Մահմուտ Նէտիսի միջոցաւ։ Եւրոպայի մէջ ահեղ զայրոյթ մը պայծեցաւ թիւրքիոյ դէմ։ Այդ սնանկութիւնը Ռուսիոյ զիւանագիտական մեծագոյն յաջողութիւններէն մէկը եղաւ։ Եւրոպայի զրամատէրները և օսմանեան արժէթուղթերու տոկոսովը ապրողները ամէնքն ալ թըշնամացան թիւրքիոյ։ Ռուսիա օսմանեան կայսրութիւնը վարկաբեկ ընելով կը պիւրացնէր անոր կղզիացումը, և պատերազմի պարագային փոխառութեան ո՛ր և է հնարաւորութիւն անկարելի կը դառնար։ Հակառուս քաղաքականութիւնը Մահմուտ Նէտիսը տապալեց, բայց ան արդէն Ռուսիոյ գործը տեսած էր։ Նոր դահլիճը որ Միտհատ փաշայի ազդեցութեան ներքեւ էր, տեսնելով որ սուլթան Ազիզ օսմանեան կայսրութիւնը բողբոջին Ռուսիոյ զերիշխանութեանը ենթարկելու կը միտի, անոր գահընկէցութիւնը վճռեց և գործադրեց։ Մուրատի վաղանցուկ իշխանութիւնէն յետոյ սուլթան Համիտ շարունակեց Միտհատեան քաղաքականութիւնը, որ թիւրք և ուրս պատերազմին յանգեցաւ։

Պատերազմէն ետքը քաղաքական կացութիւնը ա-

նորոշ էր, և սուլթանը նախ և առաջ կը ջանար ինքզինքը ազատել իր նախարարներուն ձեռքէն։ Իր ծրագիրներուն մէջ յաջողեցաւ։ Միտհատի կուսակցութեան և երեսփոխանական ժողովին ջնջումովը, սուլթան Համիտ օսմանեան կայսրութեան բացարձակ տէրը եղաւ։ Սակայն անգլիասէր և ուսասէր կուսակցութիւնները գոյութիւն ունէին միշտ, միայն թէ իրենց նիւթընատեղին Պապը-Ալիէն Երլտզ փոխադրուած էր, և հոն կը մնայ մինչև հիմակ։

Սիւալ է կարծել թէ սուլթան Համիտ իր պալատականներուն ձեռքը պարզ գործիք մըն է. ընդհակառակը ինքն է որ զանոնք կը գործածէ։ Ամենուն խորհուրդները մտիկ կ'ընէ, բայց որոշումը վերջնապէս ինքը կուտայ։ Իր քաղաքականութեանը մէջ ո՛չ բացարձակապէս Ռուսիոյ յարեցաւ երբեք, ո՛չ Անգլիոյ, այլ ջանաց ըստ պարագաներուն օգտուել մէկուն կամ միւսին ազդեցութենէն, մանաւանդ երկուքին դէմ իրեն վահան մը ստեղծած էր Գերմանիան։

Սուլթանը 1895-96ին ուսական թելադրանքներուն անսաց, վասն զի անոնք իր ներքին խորհուրդներուն ուժ կուտային։ Արդարև հայկական բարեկարգութեանց խնդիրը տկարացուց Ռուսիոյ աշակցութեամբը, բայց միևնոյն ժամանակ, իր կայսրութիւնն ալ շատ տուկարացուց։ Սուլթանը Հայաստանը բարկարգ վարչութեամբ օժտելու գաղափարը չգործադրելով, թիւրքիոյ ասիական նահանգները ուսացման վտանգին ենթարկեց։ Երկաթուղիներու կառուցման համար Ռուսիոյ ստացած մենաշնորհը ապագային համար թիւրքիոյ զիւնուն վրայ առկախ ահեղագոյն սպանալիքն է ինչպէս և Հայոց։

Այս սպանալիքէն է որ կը ջանան օգտուել Երլտզի հակառուսները, որոնք այժմ ինքզինքնին զօրացած կը զգան Անգլիոյ նախարարութեան թիւրքիոյ նկատմամբ ցոյց տուած բարեկամութեամբը։ Եթէ մենք այսօր Պոլիս ունեցած ըլլայինք պատրիարք մը որ հիմնապէս ճանչնար Երլտզի կացութիւնը, ու եւրոպական քաղաքականութեան զարձուածքները թիւրքիոյ շուրջը, և ուզէր լուրջ մտքով օգտուել արդի կացութենէն, կը հաւատանք թէ պիտի կրնար ի նպաստ հայ ազգին օգուտ քաղել Անգլիոյ և Ֆրանսայի կառավարութեանց, ինչպէս և Երլտզի թրքասէր կուսակցութեան տրամադրութիւններէն։ Դժբաղդաբար Օրմանեան պատրիարքը ժամանցով կը գբաղի։

Արտասահման գտնուող թրքահպատակ հայերն են որ կորովալիբ զործունէութեան մը միացնելով ճարտար քաղաքականութիւն մը, պարտաւոր են հետամտիլ ընելու ինչ որ կրնայինք յուսալ և սպասել Պոլսոյ պատրիարքէն, եթէ անիկա իր կոշումին զիտակցութիւնը ունենալ ուզէր։

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀԻՒԾՈՒՄԸ

Ա.

Թիֆլիսէն նորագոյն տեղեկութիւնները կը հաւաստեն թէ կովկասեան իշխանութիւնը անխոտոր յառաջխաղացութեամբ հանգրուանէ հանգրուան դէպի Հայոց ուսացման նպատակակէտը կը վազէ: Ռուսիոյ ազգակառուցութեան կեանքը պահող թոքերէն մին պատանոց, յօշատեց, լափեց: Կառավարական տնօրինութեամբ Հրատարակչական Ընկերութեան լուծումին բօթը նախորդ թուով գումարու վիշտը ունեցանք: Այս տխուր իրողութիւնը կրնայ իբր այժմէութիւն մը նկատել տալ շարունակութիւնն այն յօդուածներուն որոնք այս տարուան Նոր Կեանքի Ապրիլ 15 եւ Մայիս 1 թիւերուն մէջ երեցան, պատասխանելու համար այն հարցումին թէ « երբ Ռուսները Հայաստանի տիրելու ըլլան, մեր ուսուցումը Եկեղեցիէն պիտի սկսի, թէ Եկեղեցիով պիտի վերջանայ: Նախ կրօնքնի պիտի փոխենք ու ապա ուս պիտի ըլլանք, թէ, նախ ուս պիտի ըլլանք ու ապա կրօնափոխ: Այս հարցումին պատասխանը պիտի ջանամ փնտել թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայոց արդի կեանքին տարբերութեան մէջ: »

Երկու յօդուածի մէջ պարզեցի այն իրողութիւնները որոնք կը հաւաստեն թէ թիւրքիոյ Հայերը հակառակ իրենց կրած բոլոր նիւթական ու բարոյական տառապանքներուն, իրենց ազգայնութիւնը բարեկարգեալ օսմանեան պետութեան մը մէջ պահպանելու երաշխաւորութիւնը ունին: Հնդկի բրիտանացի եւ իսլամ քաղաքակրթութեանց տարբերութեանը, տարբերութիւն որուն առաւելութիւնները մեր կողմը կը հակին: Ռուսական քաղաքակրթութիւնը գերազանցելով հայկականը, ան է որ կովկասի բոլոր այլազան ցեղերը իր մէջ պիտի ձուլէ: Թրքազգատակ Հայաստանի մէջ երբ մենք քաղաքական առանձնաշնորհումներ վայելենք, մենք ենք որ, հակառակ մեր թիւին նուազութեանը, բոլոր ցեղերուն միութեան կեդրոնը պիտի հանդիսանանք, վասն զի մենք կը ներկայացնենք քաղաքակրթութիւն մը որ միաներունը կը գերազանցէ:

Քաղաքական անկախութիւնը կորսնցուցած ազգի մը պահպանման սատարող երկու ուժեր են՝ Մատենագրութիւն եւ Եկեղեցի: « Կովկասեան Գրականութիւնը » յօդուածով ցոյց տուի թէ Հայ լեզուն եւ Հայ գրականութիւնը ուս լեզուին եւ ուս գրականութեան ճնշումին ներքե խեղդամահ մեռնելու վտանգին մէջ են: Հիմակ

կուգամ խորհրդածութեան նիւթ ընել Ռուսիոյ մէջ Հայ Եկեղեցիին ապագան:



Հայահայած քաղաքականութեան նորանոր քայնաութիւններուն վայնասունները որքան աւելի բազմաշառաչ կը թառանչեն մեր ականջներուն, այնքան ալ աւելի խոր է լուծութիւնը երբ անձկութեամբ կը հարցնենք: « Հապա ազգային ինքնապաշտպանութեան ինչ փորձ կ'ընեն կովկասեան Հայերը: »

Պոլսոյ կոտորածներու միջոցին դիտողութիւն եղաւ թէ Հայոցմէ ոմանք ձեռքերնին լեցուն վեցհարուածեսուն մը ունենալով հանդերձ, չեն համարձակած գնդակ մը արձակել զիրենք խոշաշուլ վազողին վրայ: Ինչպէս ոչխարներ անմեղուկ, երկարած են իրենց պարանոցները թուրին առջեւ, հրալէննին որքան կարելի էր հեռու հեռու նետելով: Կովկասի բոլոր Հայերը հիմակ իրենց անձին վրայ այդ զոզողահար թշուառներուն նմանութիւնը կը բերեն: Արժուող ոչխարներու անհուն հօգեբամակի մը տեսարանը կ'ընածյեն ուսահպատակ Հայերը:

Եւ սակայն ընդդիմօրբելու սքանչելի գեփերով ըստ պառագինեալ կը թուին այդ Հայերը: Տնտեսական բարգաւաճ միճակ մը լիառատ ճոխութեամբ իրենց տրամադրութեան ներքե կը գնէ « պատերազմի ջիղ » կոչուած գէնքը, որ դրամ կը ձայնուի: Երկրորդական եւ բարձրագոյն կրթութիւն ստացած սերունդներ, որոնց մէջ սակաւաթիւ չեն Եւրոպայի Համալսարաններէ շրջանաւարտներ, կը տիրապետեն կովկասի Հայ կեանքին վրայ: Զինուորագրութիւնը որ տաքնեհինգ տարի է հետէ կը գործադրուի կովկասեան կառավարչութեան շրջանակին մէջ, հիմակ Հայոց պարգեւած է առնուազմ 20,000-30,000 քաջակորով զինավարժ հայեր, որոնց կարող են հրամայել ուսական բանակին փառքը պանծացնող Հայ սպաներ: Այդ բոլոր ուժերը որոնք ազգայնութեան պահպանումին համար սքանչելագործ զօրութեամբ մարտնչելու պատրաստուած կը նկատուէին, այդ բոլորութիւնը առանց ըմբոստացման, առանց ընդդիմամարտութեան կը համբուրեն ու գլխուն վրայ կը գնեն ուղտական ձեռքը որ քնռտը բռնած կը ձեռէ, կ'արխնոտէ Հայ ազգայնութիւնը, մինչեւ որ անիկա մարի, իյնայ, վերջանայ հոգեսպառ:

Իրենց ազգայնութեան սպանացող վտանգին բողբ ուսահպատակ Հայոց անհոգութիւնը դիպուածական, հետեւաբար եւ վաղանցուկ դժբաղդութիւն մը չէ: Այդ անհոգութիւնը բնական հետեւանք է զաղափարի եւ զգացումի այլափոխման: Այդ այլափոխումը յանկարծ մէկ օրէն միւս օրը երեան եկած չէ, այլ կամաց կամաց ծրնունդ առնելով ստեղծուել է, և հիմակ հետզհետէ կը զօրանայ: Եւ ինչպէս որ առանց զգացնելու տկարացուց

Հայ ազգայնութեան գաղափարն ու ոգին, նայնպէս եւ անշշուկ պիտի սպաննէ Հայ Եկեղեցին Կովկաս:

* * *

Կովկասի նիւթական հանգստաւէտ կենցաղավարու-
թիւնը գաղափարային ըմբոստացման ո՛ր և է ձգտում կը
չլատէ, կը թուլցնէ, կը մահացնէ: Բազմաթիւ են մեծա-
հարուստ գասակարգը կազմող հայերը. միջնակարգ ու
նեւտրներուն վիճակը նախանձելի կրնայ համարուիլ.
«Էսնաֆ» դասակարգը շատ զոհ կ'ապրի. գեղացին մառ-
նաւոր հոգածութեան առարկայ է: Բաղդատմամբ ուս-
աստանի գեղացիներուն, Վոսթիկներուն, հայ գեղացին
բարեբաստիկ է: Կովկասի հողային կազմուածքը, բնա-
կան հարստութիւնը, կլիման, աշխարհագրական դիրքը,
ժողովրդին ուշիմութիւնը միանալով, տնտեսական բարգա-
ւաճ վիճակը ստեղծած են: Ռուս կառավարութիւնն ալ
խելացի վարչութեամբ հզօրացէս կը նպաստէ Կովկասի
տնտեսական յառաջդիմութեանը: Երկաթուղին Արարա-
տի ստորոտը հասաւ, եւ Հայաստանի գեղացին կը ցնծայ
որ իր «միրգ»ը մինչև Ռուսաստանի, Եւրոպայի հրա-
պարակները վաճառելու պիտի տանի: Ոչ մէկ հայ կը
ըղձայ այս նիւթական երջանկութեան խնձարումը
տեսնել: Ազգային ինքնապաշտպանութեան ո՛ր և է շար-
ժում պիտի գրգռէ կառավարական խստութիւններ որոնց
առաջին գոհերը ունեւոր գասակարգին պատկանողները
պիտի ըլլան: Ընդունուած ճշմարտութիւն մըն է թէ,
ամէն բանապետական երկրի մէջ հարուստը «գահուն եւ
սուրին զօրավիգն է»: Եւ Գահն ու Սուրը ազատութեան,
արդարութեան դատն ու գաղափարը պաշտպանելու հա-
մար չէ որ գոյութիւն ունին: Ու երբ կը տեսնենք թէ
Կովկաս ամէն հայ կամ շատ կամ չափաւոր ընչաւէտ
մըն է, դիւրին է ըմբռնել թէ ամէնքն ալ իրենց լուս հա-
մակերպութեամբ կը դիրացնեն Հայաստան քաղաքա-
կանութեան բոլոր ծրագիրներուն անարգել յաջողու-
թիւնը:

Եւ այդ նիւթապէս հանգիստ ապրող ժողովուրդը կա-
մաց կամաց վարժեցաւ զինքը բարոյապէս ձգմող բըռ-
նաբարութեան ծանրութիւնը չզգալու: Իր կրօնական ա-
ւանդութիւնները անվթար կը պահպանուին. առանց
արգելքի իր եկեղեցին կ'երթայ, կ'աղօթէ, կը հաղոր-
դուի եթէ ուզէ: Իր լեզուին ջնջումը անզգալի կորուստ
մըն է: Ընթացիկ կերպով ուսեւրէն խօսող Հայոցմէ ոչ
ոք բնաբարութեան մը զոհուած ըլլալու գիտակցութիւնը
ունի: Մեր կեանքացի կամ Գողատացի հայերը որ մայ-
րենի լեզունին չեն գիտեր, թրքեմալը այնքան բնական
բարբառ մը կը համարին իրենց համար ինչպէս մենք հա-
յերէնը մեզի համար: Հայերէն գրքերու հրատարակու-
թեան պակասն ալ մեծ ցաւ մը չպատճառեր: Արդէն
ընդհանուր կերպով, գիրք կարգալու քիչ ատեն ունին

զօրծով զբաղողները. եւ երբ թերթի մը, գրքի մը ըն-
թերցման պէտքը զգան, ուսեւրէնը առձեռն կը գտնեն.
ու զանոնք այնքան հաճութեամբ կը կարդան ինչպէս
Պոլսոյ հայերը ֆրանսերէն հանդէսներ ու գրքեր: Դրպ-
րոցներուն ուսացումը սարսափազդեցիկ կորուստ մը չեն
համարիր: Կեանքի բոլոր պէտքերնին ուսեւրէնով գո-
հացնելու ստիպուած են, ուստի հայ տղաքը որքան ա-
ւելի հիմնովին ուսեւրէն սորվին այնքան աւելի դիւրու-
թեամբ իրենց բոլոր գործերը կը տեսնեն: Ու յետոյ,
նոյն իոկ երբ Հայոց դպրոցները դեռ ազգին ձեռքը կը
գտնուէին, հարուստները, միջնակարգ ունեւորները ի-
րենց զաւակները ինքնայոժար կամքով ուսաց Երմեա-
զիոնները կը դրկէին, բազմատեսակ նկատումներով: Եւ
ընդհանրապէս ամէն երկրի մէջ հայը երբ քիչ մը նիւթական
կարողութեան տէր է, միշտ իր զաւակը օտար վարժարանի
յանձնելու կը հակամիտի:

Իշխան Գոլլիցին ծրագրած է, ինչպէս տեսնուեցաւ
այս էջերուն մէջ հրատարակուած պաշտօնական յիշա-
տակագրէ մը, Կովկասի հայերը իրենց զրամական զօ-
րութեանը մէջ տկարացնել: Հաւանական է որ այս խոր-
հուրդը իրագործուի մեծ ձեռնարկներու համար միայն,
ինչպէս ճարտարագործական, առտարական, սեղանաւո-
րական հուժկու ընկերութեանց կազմութիւն. կամ ա-
նոնց մէջ մեծաբաժին մասնակցութիւն արգիլել Հայոց:
Բայց չենք կարծեր որ ունեւոր միջնակարգ գասակարգին
գաչի, վասն զի կործանելով այդ գասակարգը, Գոլլիցին
Կովկասի ամբողջ տնտեսական կեանքը կը վտանգէ:
Բայց եթէ նոյն իսկ այս պատահականութիւնն ալ ներ-
կայանայ, այդ պարագային ազգայնութեան զգացումը
կը հզօրանայ, և Հայութեան գաղափարը կ'սկսի վերստին
տիրել իր կորսնցուցած կոտանին:

Ստրուկ ժողովուրդները իրենց ազգային հաւատքը
մարտիրոսացմամբ վառ կը պահեն: Կովկասի Հայերը
յատկապէս իբր հայ չեն տառապած իրենց նիւթական
կեանքին մէջ, ինչպէս աստին մենք թրքահայատակ հա-
յերս: Երեք քառորդ դարու ժամանակամիջոցին օրէ օր
յօրանալով, պարարտանալով, գիրնալով, ա՛լ հանգըս-
տութեան ճարպին մէջ թաղուած, անկարող են ո՛ր և է
շարժումի: Թիւրքիոյ Հայերը ջիղ ու ոսկր կտրած, կը
նմանին քրիստոնէութեան այն սուրբերուն որոնք իրենց
նիհար, կաշմբուտն մարմնովը հուրին վրայ կ'արշաւէին
թեթիւակի, և սուրին ընդ առաջ կը վազէին:

Վերջին տասնըվեց տարիներուն մէջ, 1884-1900,
մինչ մենք ազգայնութեան պահպանումին համար մարտնչ-
չումի օւժ կ'ամբարէինք, ուստապատակ հայերը հետզհետէ
մեղմանալով ուժաթափ տկարացան: Ահա առանց ճիկ
մը հանելու միշտ կը համակերպին կառավարութեան ընդ-
դէմ ազգային հոգիին ամէն բնաբարութեանց: Տասնը
վեց տարի առաջ Կովկասի հայերը կառավարութեան
դէմ, Ռուս ժողովրդին դէմ բողոքելու ուժ մը կը զգային

իրենց իրենց մէջ: Երբ 1884 փետրուար 16ին ուս իշխանութիւնը առաջին անգամ ըլլալով ոտնձգութիւն ըրաւ Հայոց կրթական գործին մէջ, Սինոզը լաւագոյն համարեց փակել վարժարանները քան թէ անոնց մէկ մասը ուսերուն յանձնել: Բողոքարկու ահեղագոչ որոտումով կը թնդար Կովկաս: «Մեզ սպանանում են Ռաները» կը պոռային ամէն կողմէն, կողկողագին օգնութիւն հայցելով Թիւրքիոյ Հայոցմէ: Կը յիշեմ թէ, երբ Թիֆլիս էի, ուսաց բարեգործական ընկերութեան մը անգամները ըստ սովորութեան տունները կը շրջագայէին հանգանակութեան համար, երբ Հայոց ալ եկան, ամէն տունէ վճարուեցան: Մարդիկը ապշած կը մնային, վասն զի երբեք այլպիսի տմարդի վարմունքի մը հանդիպած չէին: Վերջապէս իրենց ըսուեցաւ թէ «երբ ձեր կառավարութիւնը մեր դպրոցները կը յափշտակէ մեր ձեռքերէն, ինչպէս կուզէ որ մենք ուսաց հետ եղբայրաբար վարուինք:» Նկատողութիւնը իրաւացի էր, եւ ոչ ոք բերան բացաւ: Չեմ կարծեր թէ այժմ այդ քաջութիւնը ունեցող մը գտնուի:

Կովկասի Հայոց հոգեկան վիճակը հիմակ այլափոխեալ է: Տնտեսական բարգաւաճման հետ մտաւորական զարգացումն ալ կը ծառայէ հայ ազգայնութեան ոգիին տկարացմանը: Այս երկու ուժերուն ճնշումին ներքեւ Կովկասի հայերը անտարբեր ձեռնպահներ կը մնան հանդէպ Հայութիւնը սպաննող քաղաքականութեան:

Յաջորդ յօդուածի մը կը վերապահեմ մտաւորական զարգացման պատճառած աղէտներուն վրայ խօսիլ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՎԱՐՋԱՏՐՈՒԹԻՒՆ

Հինաւորց Բագմավէպը կ'երիտասարդանայ: Պատմական, հնախօսական այդ հուշակաւոր թանգարանը հիմակ սկսած է մեր ժամանակակից կեանքի պատկերներն ալ ցուցադրել: Մխիթարեանց Հանդէսին շատագովականներն ու քննադատականները ընդհանրապէս կրօնասիրական տեսակէտներով երեւան պիտի գան: Իբր ազատամտութեան դատին շերմ պաշտպաններ, չենք կրնար սկզբունքով պարօտել կրօնաւորները իրենց համոզումներուն համար: Յառաջդիմութեան էն ապահով երաշխաւորութիւնը ամէն գաղափարի անկախօրէն արտայայտութեան մէջ կը կայանայ: Ժողովուրդ մը որ միայն մէկ կողմէն լսել կուզէ, կը մնայ միակողմանի: Մարդու մը կը նմանի որուն մարմինն մէկ մասը առողջ է, միւսը անգամալուծեալ: Կէս մարդ մը որ երկար ալ ապրի

միշտ անպէտ արարած մըն է, և բեռ մը: Ուստի յարգելով մաքի և խղճի ազատութիւնը, բնաւ զժող չենք մնար երբ կրօնաւորներ ու կրօնասէրներ, ինչ զաւանանքի ալ որ պատկանին, հանրային կեանքի ամէն երևոյթները կը շատագովեն, կը պարսաւեն կրօնասիրական փաստերով: Նոյն ազատամտութիւնը իրաւունք ունինք պահաւելու եւ կրօնաւորներէն: Բայց եթէ անոնք դժկամակին զիջանիլ հաւասարութեան օրէնքին, մենք «գոր ինչ կամիցիք թէ արասցեն»ը յիշելով եւ յիշեցնելով հաւատարիմ կը մնանք մեր դաւանանքին:

Առ այժմ իրարմէ լայնարաց անջրպետով մը չենք բաժնուած: Մեր ազգին այս տաղանակից վիճակին մէջ անցեալին հաւատարմութիւնը տոհմային ինքնապահպանումին գրաւականը կը նկատենք, և ըստ անյմ ալ մեր անհատական համոզումները զգոյշ շրջահայեցողութեամբ կը յայտնենք: Կը խորշինք կեղծաւորութենէն, բայց կուզենք խոյս տալ մերկապարանոց ծայրայեղ անկեղծութեան վտանգներէն, վասն զի պարզ ժողովուրդ մը կայ որ մեր ձայնին ականջ կը դնէ:

Բագմավէպի խմբագիր հայրերուն Ազգային, Գրական տեսութիւնները, եթէ ներքի է ըսել, պայծառափայլ անմեղութեան մը հրապոյրովը կը հրճուեցնեն մեզի: Կեանքի ըմբռնումներուն մէջ ո՞րքան կը տարբերին մենք: Գասական ու կրօնական դաստիարակութեամբ կրթուած, բանաստեղծական մթնոլորտի մը մէջ ապրած — եւ ապրող — հայրերը մեր գործնական կեանքին իրականութիւնները չեն հասկնար այնպէս ինչպէս մենք: Դիտած եմ թէ շատ անգամ ուր որ իրականութիւնը ներողամտութեան կը հրաւիրէ, իրենք խստապահանջ աններողներ կը հանդիսանան. եւ երբ աններողութիւնը քաղաքացիական առաքինութիւն պէտք է նկատուի, այն տեն բանաստեղծական թոյլով կ'արժանանան ներողամտութեան բարձունքը: Բայց, ինչպէս ըսի, տեսութեանց այլազանութիւններէն կը բղիթ յառաջդիմութիւնը, ուստի առանց զժողհանալու կը դիտենք շատ խնդիրներու մէջ ըմբռնումի տարբերութիւնները:



Բագմավէպի հոկտեմբերի պրակը «Գրական Նահատակներ» վերնագրով խմբագրականը այս քանի մը նկատողութիւնները ներկայացնելու առիթ տուաւ:

Շատ ուշադիր մտքով, և թիչ մըն ալ զգացող սրտով, կարդացի այդ յօդուածը: Կրօնաւոր զրազէտները աշխարհական զրոյններուն համար եղբայրական սէր կը տածեն, և անհուն համակրանքով կը ցաւակցին անոնց վշտերուն: Այդ զգացումները ազնուազգի են, բայց կարգ մը հարցումներ կը ներկայանան մաքիս առջև: Հայ զրազէտները իրաւ եւ թաղրուածին չափ զժրջող են: Տեղեկեցրական հին եւ նոր գրականութեանց մէջ բացառիկ

օրինակներ են: Ստուգի կարօտ են վարձատրութեան, Հարցումներ որոնց քիչ շատ ձեռնհասութեամբ պատասխանելու իրաւասութիւնը կարծեմ ոչ ոք պիտի ուզէ զըլանալ ինծի:

* * *

Ընդհանուր տեսութեամբ խօսելով, մենք հայերս ուրիշ ո՛ր և է ժողովուրդ ստորին վիճակի մէջ չենք գտնուիր ընթերցանութեան կողմէ, եթէ նկատողութեան անոնք այն բոլոր պայմանները ուր կ'ապրինք: Եւ արդարեւ, ենթադրենք թէ Բարիզ և շրջակայ մէկ քանի նահանգներու մէջ հրատարակուած թերթերը, հանգէսները, գրքերը, չկարենային ֆրանսական միւս նահանգները մտնել. արդեօք Ֆրանսացիները Հայոց չափ թերթ կամ դիրք պիտի կրնային արտադրել: Բնա՛ւ: Այսօր մենք գլխաւորապէս երկու պետութեանց լուծերուն ներքէ կը գտնուինք, որոնք իրենց սահմանազուլները փոխադարձաբար փակած են Հայոց մտաւոր արտադրութեանց առջեւ: Ո՛չ Ռուսաստան հրատարակուած թերթերը եւ գրքերը կրնան թիրաքիտ մտնել, ո՛չ Թիւրքիա տպագրուածները կրնան ազատօրէն Ռուսաստանի սահմաններէն անցնիլ: Իսկ Եւրոպա ու Ամերիկա հրատարակուող ոչ մէկ գործ կրնայ թիրաքիտ կամ Ռուսիա մտնել: Արտասահմանն է միայն ուր հայ ամէն հրատարակութիւն կրնայ ազատօրէն մուտ գտնել. բայց հոն ալ հայ գաղթականներուն թիւը շատ սահմանափակ է: Ահա ուրեմն Հայոց կամքէն անկախ առաջին արդելք մը հայերէն գրքերու հրատարակութեանց տարածմանը:

Յետոյ կուգայ գրաքննութիւնը: Թէ թիրաքիտ և թէ Ռուսիա հայ մատենագրութիւնը շատ աւելի բարգաւաճ վիճակ մը կ'ունենար եթէ գրաքննութեան ճնշումէն ազատ մնար: Ամէն գրող կաշկանդուած, պրկուած է: Հարկ է որ միտքը գետնամած սողոսկի, հոգին իր սըլացումները շղթայէ, և սիրտը խանգրած մխայ: Երբ հեղինակին ու ժողովուրդին միջեւ գրաքննութեան պատնէշը կը բարձրանայ, չթոյլատրելով ո՛ր և է հսգեկան ու մտաւորական հաղորդակցութիւն, ինչ գրէ հեղինակը, ինչ կարգայ ժողովուրդը: Եւ ահա տարիներէ ի վեր թիրաքիտ մէջ գրական հրատարակութիւն մը երևան չէ եկած. անդին Ռուսիա եւս հայ մատենագրութիւնը կը հոգեւորի: Տարաբաղղ Հրատարակչական Ընկերութիւնը իր թարգմանական ընտրութեանց մէջ իսկ ծայրայեղ գգուշաւորութեան պարտաւորեալ էր: Ու չմ'ը տեսներ թէ Մխիթարեաններն անգամ որ քաղաքական գրաքննութեան կոշկոճիչ թակէն ազատ են, որպիսի՛ խոհեմազարդ աչալընութեամբ ինքնայօժար կը հպատակին ամէն երկրի գրաքննական պահանջուիներուն: Անշուշտ զիւրենք մեղադրողներ չենք այս ինքնապաշտպանութեան հարկին համար, վասն զի հակառակ պարագային այլ գուս՛ և է զիքք պիտի չտեսնուի: Եւրոպայի կամ Ամերի-

կայի ո՛ր երկիրն է որ պիտի կարենար բարգաւաճ գրականութեամբ մը պանծալ եթէ երբեք օտար ցեղ մը իր միտքը պրկէր, կաշկանդէր, ճգմէր: Իրաւ է որ Ռուս մատենագրութիւնը գրաքննութեան ենթարկուած ըլլալով հանդերձ կը զարգանայ, բայց ինչ որ ուուսին ներուած է այն հայուն արգիլեալ է: Եւ յետոյ, ո՛վ կրնայ գուշակել թէ ուուս գրականութիւնը որքան բարձրաթոխչ պիտի սլանար եթէ գրաքննութիւնը զինքը կապկպած չըլլար:

Գրականութեան բարգաւաճումը մտաւորական զարգացման հետ համընթաց կը յառաջանայ: Հայոց մէջ զպրոցները որքան աւելի կը շատնան ընթերցողներուն թիւն ալ այնքան աւելի կ'աճի: Փորձը օրագրութեան վրայ տեսնուեցաւ: Երբեմն Պոլիս հայատառ թրքաբարբառ թերթեր շատ ծաւալած էին: Մանգուռէ ատեն եղաւ որ օրը երկու տպագրութիւն կը հրատարակէր, իւրաքանչիւր հատ 40 փարայ: Քիչ մը կարգալ գրել զիտցողը առանց մեղ գժուարութեան կը հասկնար Մանգուռէն, Մեճմուռան: Հայերէնի ընդհանրացումը տկարացուց թրքաբարբառ հայ մամուլը եւ զարկ տուաւ հայկականին: Հայրենիքի հրատարակութեան միջոցին տեսանք թէ ամէն տարի թէ Հայաստան և թէ Պոլիս զըլուցներէ շրջանաւարտները ընթերցողներու նոր խումբեր կը բերէին մեզի: Դպրոցներու մէջ զրաբարի անկումը միանգամայն պակսեցուց զրաբար հրատարակութեանց թիւը:

Հայ օրագրութիւնը վերջին տասը տարուան մէջ ընթերցողներու յարաճուն թիւ մը ունեցաւ թէ կովկաս և թէ Պոլիս, թիւ մը որ առատօրէն կը բաւէ թերթերուն հրատարակութեանը և խմբագիրներուն հանդիստ կենցաղավարութեանը: Հանգուցեալ Գրիգոր Արժրունին կը յայտարարէր որ երբ Մշակ 2,000 բաժանորդ ունենայ թէ՛ խմբագրութիւնը շատ լաւ կ'ապրի, թէ աշխատակիցները կը վարձատրուին: Այդ օրէն ի վեր, ինչպէս կը լսուի կովկաս, Մշակի բաժանորդները 2,000 թիւը անցած են: Եթէ ուրիշ թերթեր յաջողութիւն չեն գտած, յանցանքը նախ եւ առաջ իրենցն է: Թերթ մը հնարաւոր է ժողովրդին սիրելի և հաճելի ընծայել, որքան որ ալ զըրաքննութեան պայմանները խիստ ըլլան: Յետոյ, սուսական մամուլին մրցակցութիւնը մեծ խոչընդոտ մըն է հայ մամուլին յառաջդիմութեան: Ազգային կեանքի գրեթէ անգոյութիւնը կը զրկէ կովկասի հայ մամուլը ընթերցողներուն համար համով հոտով հրապոյրէ:

Թիրաքիտ թէ և գրաքննութիւնը չափազանցօրէն խիստ է բայց այսօր քանի մը օրաթերթ, քանի մը շաբաթաթերթ շատ աղէկ կ'ապրին: Եւ եթէ հայ թերթերուն վրայէն ալ զրոշմի ծանր տուրքը ջնջուի, ինչպէս ջնջուեցաւ Պոլսոյ թիրաք և եւրոպական մամուլին վրայէն, հայ մամուլը շատ պարկեշտ խմբագրութիւն մը ունենալի

հանդերձ կարող է ո՛րև առևտրական ձեռնարկի մը պէս յաջող ընթանալ:

Թէ Թիֆլիս թէ Պոլիս «ազգարարութեանց» առատութիւնը կ'ապահովէ հայ մամուլին կեանքը: Երբ մենք հայ ժողովուրդը կը քննադատենք թէ մամուլ մը ապրեցնելու անկարող է, հարկ է նաև անդրադառնալ թէ աշխարհիս ոչ մէկ կողմը օրաթերթ կամ հանդէս կրնան ապրիլ առանց լիառատ ծանուցումներու: Անգլիոյ ահագնածաւալ թերթերը շաբաթ մը իսկ չէին կրնար դիմանալ եթէ իրենց և կամուտը բաժանորդներէն ակնկալէին: Քսան տարի առաջ Պոլիս հայ թերթերը շատ սակաւթիւ ծանուցումներ կունենային. և ապրելու համար բնականաբար անպարկեշտ միջոցներու դիմուծի փորձութեանը պիտի ենթարկուէին: Մասին սկսաւ բաւականաչափ թուով ազգարարութիւններ ունենալ այնպէս որ երբ Արևելքի մէջ ձուլուեցաւ, իր հետ դրամօժիտ բերաւ 800—1,000 բաժանորդի հետ նաև տարեկան 300—600 ոսկիի ծանուցումներու դումար մը: Եւ մինչև այսօր Արևելք այդ օժիտովը կ'ապրի: Տասը փարա վաճառուող Հայրենիքը չէր կրնար դիմանալ առանց ծանուցումի: Ազգարարութիւններէ եկամուտը պատկառելի դումար մը կ'արտադրէր: Պոլիս հետզհետէ շատցան ապահովագրական ընկերութիւնները, ճարտարագործական զանազան ձեռնարկութիւնները, եւրոպական վաճառատունները, սեղանաւորական հաստատութիւնները, եւ այլն և այլն: Մասնաւորապէս օտարազգիներն են որ հայերէն օրագրներուն միջնորդութեանը դիմուծ կ'ընեն հայ յաճախորդները գրաւելու համար: Թիւրքիոյ հայերը տընտեսական որքան աւելի բարգաւաճ վիճակ ունենան, իրենց գրաւած դիրքը որքան աւելի կարևոր ըլլալ, օտարազգիներն ալ այնքան աւելի կը պարտաւորուին հայ մամուլին հեղինակութիւնը ըմբռնել:

Մամուլին վրայ դրուած ծանրագոյն բեռը դրոշմի տուրքն է: Ամէն մէկ թիւի համար երկու փարա կը վըճարուի, և ան ալ մէծիտիւն 19էն հաշուելով: Երբ հայերէն թերթերը հատը 40 փարայի կը վաճառուէին այս տուրքը շափազանցօրէն ծանր չէր երևնար, բայց երբ աժանագին լրագրութիւնը սկսաւ, ան ատեն դրոշմին ահեղ ճնշումը զգալի եղաւ: Քսան փարանոց թերթերուն համար արդէն այս տուրքը շատ ծանր կուգար, իսկ երբ Հայրենիք տասը փարայ վաճառուող թերթի նորութիւնը մտցուց ազգին մէջ, դրոշմի տուրքը բարգաւաճման մեծ խոչնդոտ եղաւ: Միջին հաշուով տարին 800էն 1,000 ոսկի կը վճարուէր դրոշմի համար: Ոչ մէկ սեղանաւորական, առևտրական, ճարտարագործական ձեռնարկ այդպիսի մեծաքանակ հարկատուութեան մը ներքե ընկնուած էր: Ով կրնայ տարակուսիլ թէ տարեկան 1,000 ոսկին որքան աշխատակիցներ վարձատրելու պիտի բաւէր: Այս տարի թիւրք ու եւրոպական թերթերուն համար դրոշմի տուրքը շնչուեցաւ, բայց անհասարարութեան սոսկալի անիրաւու-

թեամբ մը հայ մամուլը կը մնայ այդ բնուան ներքե ընկնուած: Բայց այս կայ որ այս պատիժը երկարատև պիտի չըլլայ, և հայ թերթերը պիտի ազատին այդ արին ծծող տղրուկէն որ դրոշմի տուրք կը կոչուի:

Այս քանի մը տեղեկութիւնները հաղորդեցի նկատողութեան առնելով Բագրատիկայի այն դիտողութիւնը թէ «կը ցաւինք ըսելու որ Հայրենիք ծանօթ պատճառնեւ «բէն զատ, բաժանորդաց անվարձատրութեան իսկ ըստ «տիպեալ կը զարբի գործելն:» Ոչ վաճառուները, ոչ ազգա բարութիւնները դժգոհացուցիչ կ'ըն: Ընդհակառակը Հայրենիք նոյն իսկ առևտրական տեսակետով մեծ յաջողութիւն մը ըլլալու սահմանուած էր: Ժողովուրդը մեզի գրկած էր. զաղափարի կոխը, ազգային շահերու պաշտպանութեան մարտնչուիւն էր որ հարկադրեցին թերթին վերջնական խափանումը:

Չերմի տենդագին կեանքը որով ապրեցաւ այդ թերթը, եղաւ կեանք մը անդադրուած զազարումներու: Ահեղ պատահարները խորտակեցին Հայրենիքն ալ բայց չը սպաննեցին ոգին սր զայն կը վարէր: Չենց ողբար այդ դժբաղդութեան համար: Մերիններուն ընդհանուր զրգբաղդութեանը մէջ չէինք փափայեր առանձնաշնորհեալ բարեբաստութիւն մը վայելելու իրաւունքը ունենալ: Մենք մեր ցեղին աղէտներուն աղէտակից պարտաւոր էինք ըլլալ, եւ ոչ կարեկցող հանդիսատեսներ միայն:

Այսօր հայ գրականութեան նիւթական կեանքի տառապանքներուն վրայ խօսեցայ: Բագրատիկայ հոգածու ցաւակցութեամբ կ'ողբայ հայ բանաստեղծներուն, մատենագիրներուն ամէն տարբաղութեանց վրայ, սկսեալ Պէշիկիշաշլեանէն ու Դուրեանէն մինչև մեր օրերը: Ուրիշ առթի մը կը վերապահեմ մեր գրականութեան նուիրուողներուն հոգեկան վիճակին ուսումնասիրութիւնը: Առ այժմ այս յօդուածս կը վերջացնեմ դիտողութեամբ մը: Բագրատիկայ կը կարծէ թէ Նոր կեանքն աշնջասպառ կ'ապրի: Ենթադրութիւնը սխալ է: Այս հանդէսը ահա երբորդ շրջանը բոլորելու վրայ է, եւ օր մը իսկ զանգատ մը յայտնելու առիթը չենք ունեցած: Հանդէսին հիմնարկութեան պահուն մեր յոյսերը իրականացան: Գիտէինք թէ այս Հանդէսը յայտնի կերպով պիտի չմտնէ Թիւրքիա եւ Ռուսիա, հետեւաբար արդէն դիտէինք թէ բաժանորդներու բազմաքանակ թիւ մը չէինք կրնար ունենալ. բայց արտասահմանի ընթերցողները յուսացուածէն աւելի գոհացուցին մեզի: Վստահ եմ թէ Բագրատիկայի խմբագրութիւնը շատ ուրախ պիտի ըլլայ այս իրողութեանը տեղեկանալով:

Ա. Ա.

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 10 հոկտեմբեր, 1900

Խոհայի կիներ:—Տխողոսուտոր առաստառայր:—Մե'ր հերոսը:—Հերոս և Հերոս:

Հինգ տարի առաջ Տիկին Մատակեանը երկարակեաց ապրելու երաշխաւորութիւն ընծայող քաջաողջութեամբ կը թողուինք Պոլիս, հիմակ յանկարծ մահուան գուժը կը հասնի. այսքան շուտ:

Նա յոյժ սիրող էր պարոսց, ա՛յս է մահուան իշր պատձառ,

Կ'ողբար Հիւկո Ուրուականներուն մէջ վաղամեծիկ Պարուհիին վրայ.

Նա յոյժ սիրող էր մակկանց, ա՛յս է մահուան իշր պատձառ:

Կը սրմնչենք և մենք տարաբաղդ մանկավարժուհիին իբր տապանագիր:

Է՛ծիչկները անդամահաւելով հանգուցեալ Տիկնոջ մարմինը, անոր թոքերը զօրեղ գտեր են, բայց սիրտը յոգնած: Օ՛հ, իմաստունը չէր սխալեր իր հոգեբանական ախտագնութեանը մէջ, երբ ցաւագին կը հառաչէր, «ցեց ոսկերաց՝ օրրտ հոգած»:

Տիկին Մատակեանը շատ անգամ գրեթէ շնչասպառ վիճակի մէջ տեղում եմ Պոլիս: Մարմարայի մէկ ծայրէն Վոսփօրի մէկ ծայրը կը վազէր: Առանց չափազանցութեան կը խօսիս Մէկ օրուան մէջ առտուն Բերայէն Մաքրիզեղ կ'երթար, ուրկէ Պոյաճըզեղ կուգար, իրիկունն ալ Իբրայ յառնալու համար: Յաջորդ օրը նոյն ուղեւորութիւնը Բերայէն Օրթագեղ կ'ընէր, Օրթագեղէն իւսկիւտար: Հանդիպած եմ որ ցորեկը հազիւ պատառ մը հաց եւ պահիր բերանը դնելու ժամանակ կուեննար:

—Անձերնիդ քիչ մը խնայեցէք, տիկին, կը յորդորէի իրեն, ինչպէս ինձի հետ և իր միւս բարեկամները:

—Ախ, այս երախաները, այս երախաները. ամէնքին ցանկանում եմ ժամանել, կ'ըսէր:

Սրտին թեւրուն ներքե համապարփակ ժողովել կ'ուզէր Պոլսոյ բոլոր հայ մանուկները: Այս հոգեմաշ կեանքովը ապրեցաւ տասնը չորս տարի: Սիրտը ինչպէս չէր կրնար շյոգնիլ:

Տանապանքներու կեանքին մէջ երջանիկ պիտի համարէր ինքզինքը եթէ իրեն զարանակալ հսկած չըլար շաղկաղբուն զատարկախօսութիւնը: Հոչակաւոր էֆէնտիններ, նորընծայ հարուստիկներ, իրենց զովող ունենալով կովկասցիներ, ու խաչպ կովկասցիներ, տքնեցան

այդ խեղճ կինը մահացնելու: Բայց զիմացկուն էր անկալ, իրեն զօրավիզ ունենալով Պոլսեցի գրագէտներու, զարգացեալ երիտասարդներու եւ երիտասարգուհիներու խումբ մը, եւ վահան՝ Հայրենիքը, որ անձնուէր մանկավարժուհի իբր Խոհայի կինը կը ներկայացնէր Թիւրքիոյ Հայոց:

Մեր ժողովրդին, եթէ չեմ սխալիր, առաջին անգամ եւ ծանօթացուցած էի Տիկին Մատակեանի տնունը Արևելքի միջոցաւ: Խորին յարգանքով ընդունեցինք Կովկասուհիին երբ մէկ հատիկ զաւակը գերկը Պոլիս կուգար 1886ին: Ինչքան ալլափոխեալ կը գտնէի տարաբաղդ կինը: Ուրախ զուարթ աղջիկ մըն էր, երբ գեռ օրիորդ Գայիանէ Յավհաննէսեան ճանչցած էի գինք Երևան 1884ի գարնան: Սեբր հագած սգաւոր որբուարի մըն էր հիմակ, արտում տխուր:

Տրամութեան ու տիրութեան աշխարհէն կուգար հալածական: Ռուսը իր քնռաւը նոր կ'իջեցնէր Հայոց քիթն ու բերնին. մտրակի շաչիւնին՝ ապտակի մը շտապը կը պատասխանէր. պոռթկում հայ սրտին: Երևանի սուս դպրոցին առաջնակարգ պաշտօնատարներէն մէկը հայ պատանի մը նախատած էր իր զգայութեանը մէջ. տղուն եղբայրը վարժարան ներկայանալով մեծաշինդ ապտակով մը կը սարսեցնէ ոռուին այտը, ծնօտը, ամբողջ իրանը: Հարուածին սաստկութեան ցաւը մինչեւ Բեղրպուրի Ներքին գործերու Նախարարութեան սրտին կը գարնէ: Սեւ Սարսափին տիրապետութիւնը կը հրշակուի կսովկասի վրայ: Ռուսական մագիլները Երևանէն կը քաշեն, կը հանեն Հայութեան կորովը իրենց անձին մէջ մարմնացնող երիտասարդները: Մոլեգնում վայրագ սոստիկանութիւնը խառնամառն բանտերը կը դիզէր փաստարան, բժիշկ, գրագէտ, գրագիր, ամէն հայ որ չէր կրնար իր դէմքին վրայ մթազնեցնել հայ արիւնին եռման զեռման կարմիր փայլը: Ու օր մը ամէնքն ալ կը քշուէին Բոլոնիոյ ներսերը, Ռուսիոյ խորքերը. Հայ հողէն հեռու հեռու: Տարագրեաններուն հօտին մէջ էր նստե փաստարան Հայկ Մատակեան, որուն կ'ընկերանար իր նորապսակ կինը: Յուրտ կլիմայի մը ներքե, զրկանքներու մէջ, խեղճ երիտասարդը շատ չ'ապրէր: Իր կինը աղքեկովը միտ մինակ կը մնայ: Եւ կուգայ Պոլիս ազատ շունչ մը շնչել, եւ ինքզինքը նուիրել հայ մանուկներուն:

Արուեստանոցի տնօրէն, մանկապարտէզներու հիմնադիր, օրագրութեան մէջ վաստակաւոր, հիւանդներու խնամակալ, ահա ինչ եղաւ շարունակ տասնը չորս տարի Տիկին Գայիանէ Մատակեան: Ու ամէնուս սրտին մէջ, նոյն իսկ անոնց որոնք սրտնեղութեան պատճառներ ունեցած ըլլան իրմէն, գառնակսկիթ յիշատակ մը կը թողու:

* * *

Այս աներևութացումը կը գրդէ զիս պրպտել յիշու- ղութիւնս, հոն գտնելու համար անունը Պոլիս այցելող ուրիշ Կովկասցիի մըն ալ որուն մեզի մատուցած ծառա- յութիւնները հաւասարէին Տիկին Մատակեանի մեզի ընձեռած օգուտներուն։ Եւ ի զսր կը տքնիմ։ Տիկին Մատակեան՝ ոչ թէ առաջինն է, այլ միակ Կովկասցին որ Պոլիս գալով, գէթ այս վերջին քսան տարիներս, օգտակար բան մը ըրած ըլլայ թրքահայատակ Հայոց։ Միւսները։

Այդ միւսներուն նկարագիրը Պոլսէն կը հաղորդէի շատ տարի առաջ Թիֆլիսի մամուլին։ Աւա՛ղ, այդ հին տիպարները հիմակ այլ եւս աներևութացան։ «Աւա՛ղ» ս- ճարտասանական բացագանչութիւն մը չէ, այլ սրտա- բուրդի հառաչանք մը։ Կը սիրեմ այդ հին դէմքերուն յիշատակին հետ կենակցիլ երբեմն երբեմն։ Անոնք ալ մեր աչքերէն արցունքներ բերել տուին, բայց ծիծաղի արցունքներ միայն։

Ընդհանուր կերպով երեք դասի կը բաժնուէին մեզի հիւր եկողները։ «Հոչակաւոր մանկավարժները», «հոչա- կաւոր վաճառականները», «հոչակաւոր զօրավարները»։ Պոլիս եկող ամէն Կովկասցի հայ այս երեք հոչակաւոր- ներէն մէկուն կը պատկանէր։ Այցելունքը իրենց կարող էին իրենց տիտղոսը որոշել և ըստ այնմ ներկայանալ։ Մեծ մտածք նախապատիւ կը համարէին «հոչակաւոր մանկավարժ» նկատուիլ, այս յորջորջման մէջ գտնուելով ներկային ապահովութիւնը, ապագային երաշխաւորու- թիւնը։ Զօրավարութեան աստիճանը գերազանցօրէն բաղ- զախնդրութեան մենաշնորհն էր, եւ Կովկասէն աւելի ախորժաւոր կը հնչէր մինչև Պոլիս։ Տկլորները որոնք զրամօթիտով ազլիկ փնտոել կուգային, անոնք միշտ Կով- կասի «հոչակաւոր վաճառականներ» էին։

Պոլսոյ Հայոց համար անմեղութեան թուականներն էին այն ատենները՝ և ինչպէս սովորութիւն է ըսել, հա- լած իւրի պէս կը կլլէինք ամէն հրաշապատում ճառ, բա- ւական էր որ կովկասեան անցագրով գար մեզի։ Թերե- հաւասանները կը նկատուէին ազգին բարիքին չկա՞նք։ Փորձը քանի մը անգամ անձիս վրայ տեսայ։

Օր մը Ղալաթիա Խովեար Խօսնը մինչ գրասենեակիս մէջ կ'աշխատէի, բարեկամներէս մէկը շնչասպառ վագելով օճնեակս։

—Շո՛ւտ ըրէ, շուտ ըրէ՛, եկուր, ըսելով զիս առաւ տարաւ։

Խօսնին դուռը հասնելով տեսայ թէ բոլոր հայ սա- րաֆները, ցօմիսիոն խանի ձագոնները ամէնքը ուղի վրայ են, ու Գարա-Քէօյէն անցնող ամէն հայու ձեռ- քէն բռնելով կը կայնեցնէին։

- Ի՛նչ կայ, հարցուցի բարեկամիս։
- Հիմա պիտի անցնի։
- Ո՞վ. օուլթա՞նը։
- Չէ՛ ճանրմ, անիկայ, անիկայ։

—Նա՛, ն'ա կուգայ կոր։
Տեսարանը աչքիս առջին է։ Երկձի կառք մը յաւ- ըրնթացիկ կը յառաջանար։ Ժողովուրդը Գարա-Քէօյի երկու մայթին վրայ շարուած, յարգալիւ հետաքրքրութեամբ կը դիտէր անցքը։ Յոյները Հայոց կը հարցնէին անցնո- ղին տիտղոսը։

— Իշխանն է, կը պատասխանէին հայերը սիգապանծ շեշտով։

- Ո՞ր իշխանը, հարցուցի զիս հրաւիրողին։
- Նափուէոնը, յայտարարեց խրոխտաբար։
- Հայու կը նմանէր, ըսի։
- Միթէ հայ չէ՞, վրայ բերաւ զարմացած,
- Ո՞ր տիղացի է։
- Ռո՛ւսիայէն։

Միտքս ինկաւ թէ Նափուէոն Ամատունին ըլլալու էր։ Խօսակիցս խորհրդաւոր ձայնով մը աւելցուց։

- Գործին համար եկած է։
- Ո՞ր գործին։
- Հայկական խնդրին համար։
- Ի՛նչ խենդ խօսքեր կ'ընէք, ըսի։ Մարդը թատրո- նական ձեռնարկներու համար եկած է։

— Դուք ասանկ էք, մրմոսցաբարի երիտասարդը դառ- նութեան շեշտով մը, մարդը չէք քաշեր. ասոր համար մեր ազգին բան մը ըլլալիք չունի։

Շիտակը ըսելով Ամատունին մտքէն իսկ չէր անցու- ցած ժողովրդէն իրեն վերադրուած առաքելութեան պաշ- տօնը։ Ազգանուէր Հայուհեացին քսան և հինգ ոսկի նը- ւիրած ըլլալով, այս առատաձեռնութեան համբաւը կը զաշնակցէր Նափուէոն, Ռուսիացի, Ամատունի, իշխան շողշողուն անուններու եւ տիտղոսներու հմալքին, ու թօխ կուտար ժողովրդին երևակայութեանը։

Իշխանը քանի մը տարի ետքը տաժանակիլը աշխա- տութեան կը դատապարտուէր, զրամատան մը վարիչի պաշտօնին մէջ նենգութեան ու կեղծարարութեան յան- ցանքով։



Մեր յարտբերութիւնները Ռուսահպատակ Հայոց հետ երբ հետզհետէ սերտացան, անոնց գէմքերը մեզի այնքան քաջածանօթ զարձան որքան մերիները։ Խու- րաքանչիւր անձնաւորութեան կենսագրութիւնը մեզի ծա- նօթ էր, ու ա՛լ ամէն մէկ «հոչակաւոր» ըստ իր բուն արժէքին գնահատելու ձեռնհաս կը գտնուէինք, ուստի այդ դէմքերը այլ եօ ցանցառաբար կը տեսնուէին Պոլիս։ Անոնց տեղը սակայն նոր դատակարգ մը բռնեց. Կովկասի «հոչակաւոր հերոս»ը երևցաւ։

Կացութիւննիս, ինչպէս սովորութիւն է ըսել ծանր պարագաներու մէջ, «փափուկ էր»։ Մեզի այցելող հերո- սին ծագումը իմանալու հետաքրքրութիւնը, անոր անց- եալին պրպտումի մը բաղձանքը, գրեթէ Կաւաճանութիւն

մը կը համարուէր ազգային ազատութեան դատին դէմ:

—Ինչ կ'ընէք, ինչ կ'ընէք: Հարցուփորձ մի՛: Հը՛: Եթէ զեսպանատունը իմանա՛լ որ ան հոս է:

Ու կամացուկ մը, աչքերը զգուշաւորութեամբ չորս կողմը ծուռ ածելէ յետոյ, հերոսին քելալը կ'ըսէր.

—Սիպի՛ր, Սիպի՛ր:

Հարկ էր սարսուռ: Միզի ազատելու եկող «հերոս»ը առաջ մեծ նիկիլիստ—Ոչնչական—մըն է եղեր: Ռուս կառավարութիւնը աշխարհիս չորս կողմը զայն կը փնտռէ: Եթէ իմանայ որ Պոլիս է:

Ինչ ընել: Պոլսոյ Հայոց վրայ ծանրացած հայրենասիրական պարտականութիւնը շատ պարզ էր. —Պապանձում: Փորձառութեամբ զիտէինք թէ հետաքրքրութիւնը սուղի նստած է մարդկութեան, և հիմակ ալ կրնար ազիտաբեր ըլլալ Հայաստանի:

Եթէ լուելու հարկ կը տեսնուէր, բայց զիտելու ալ պէտքը կը զգացուէր: Անդրազարձանք թէ «հոչակաւոր հերոսները» միշտ Պոլսէն կ'աներևութանային յեղափոխական տօներու ճրագալոյցին իրիկունը, մէյ մըն ալ հոն չերևնալու խոհեմութեամբ: Իսկ Նիկիլիստ—Հերոսներն ալ, զոր ուսաց զեսպանատունը աչալըութեամբ կը փնտռէր ամէն ուրեք, իրենց անցոյթ ապաստանը Մաքսիմֆի թեւերուն ներքև կը փնտռէին:

Կովկասցի մէկ հայ մը տեսայ միայն օր Պոլիս իր աչքերը ուսական հիւպատոսարանին վրայ չէր յառերթիրք բանտերու կենցաղավարութիւնը քան իր զեսպանատան հիւրընկալութիւնը նախապատիւ համարելով: Բայց այդ երիտասարդն ալ ինքզինքը անարժան կը նկատէր Հերոս տիտղոսին:

Սակայն զէպքերը ետքէն մեր հետաքրքրութիւնը գուհացուցին, և առատալիր: Հերոսներուն կենսագրութիւնները իրենց բերաններէն իմացանք: Ոմանք ուզեցին իրենց կեանքին մեծ գծերը անմահ թողուլ ապագայ սերունդներուն համար: Հայ մը այդ պատմական էջերը կարդալէ յետոյ կարծեմ թէ տկար երևակալութեան ծնունդ պիտի համարէր Վահրամ—Երօտի էն հրաշապատում ըստեղծագործութիւնը իսկ: Սուտ չէ որ ըսեր են թէ «ճըշմարտութիւնը միշտ ճշմարտանման չէ»: Հեզնաբանին երևակալութիւնը պիտի չկրնար սաւառնիլ զաւելտի այն բարձունքը ուր իրական ճշմարտութիւնը կը թոցնէ մեզի երօսներու ինքնակենսագրութեան թեւերուն վրայ:

Այդ էջերէն քովս բան մը չունիմ որ ներկայացնեմ, բայց կը յուսամ թէ օր մը մեր ընթերցողներուն հետ մէկտեղ կը խնամանք: Միայն կը լինեմ զրուագ մը, իր տեսակին մէջ սքանչելի, բայց ոչ եզակի. բարեբաղդաբար: Ինչ որ մեզի անմեղորէն կը զուարճացնէ, միշտ բարիք մըն է. այդ բարիքները որքան աւելի առատալիր վայելենք այնքան աւելի ուրախ կ'ըլլանք:

Կովկասցի մեծանուն հերոս մը Պոլիս կուգայ. էն պզտիկ ծառայութիւնը զօր մեզի կուզէ մատուցանել:

Երևոյցի պալատը օդը հանելը պիտի ըլլայ: Ա՛լ մտածեցէք մեծերուն վրայ: Թիւրքիոյ մայրաքաղաքը ժամանելէն չորս հինգ օր ետքը արդէն սարսափը կը սկսի տարածել չորս կողմը, տերրօրական շատ պարզ գործողութեամբ մը: Բայց զիտենք թէ վսեմը պարզութեան մէջ կը կայանայ շատ անգամ: Նորեկ հերոսը սուլթանին գահակալութեան տարեդարձին իրիկունը, օգոստոս 19 31, իբր պարզ մահկանացու մը կը խառնուի ամբոխին մէջ, և Պէշիկթաշ երթալով ինքն ալ հանդիսատես մը կ'ըլլայ լուսավառութեանց: Ու կամացուկ մը բռնեցքը սպանալից երևոյցին ցոյց կուտայ: Տե՛հ, Պոլսոյ հոսհոսները կարող են այդպիսի խիզախ յանդգնութեան մը: Իր արիւթութեան այս ապացոյցը տալէն յետոյ այլ ևս կը մնայ հանգարտ մինչեւ որ պատեհութիւնը ներկայանայ իր զօրութիւնը երեւան բերելու համար: Եւ ահա օր մը մարդուկը կը լսէ թէ Պոլիս ձերբակալութիւններ կը կատարուին, ոստիկանութիւնը հայերը կ'ահաբեկէ:

—Տե՛հ, ես քո հերն անիծած, կը գոչէ, արի՛ տես թէ ևս քեզ ինչ անեմ:

Շիտակ տուն կը վազէ կը յափշտակէ երկու վեցհարուածեանները, զանոնք կարմիր թաշկինակի մը մէջ կը փաթթէ, եւ զոնէն զուրս կը սուրայ:

Բարեկամս այս նկարագրութիւնը կը կարդար, եւ ես կ'ունկնդրէի:

—Տարակոյս չի կայ թէ երկու վեցհարուածեաններովը էն քեզը քսաներկու ոստիկան սպաննած ըլլալը պիտի ուզէ կլլեցնել, եւ կարմիր թաշկինակն ալ իբր անիշխանական զրօշակ պարզած ըլլալը պիտի իմացնէ:

Բայց ահա թերթը բարեկամիս ձեռքէն ինկաւ, կողերը կը բռնէր խնտալէն: Թերթը ես առի, ու ես ալ շարունակելու անկարող եղայ: Հերոսը երկու վեցհարուածեանը ամուր մը կարմիր թաշկինամին մէջ կը փաթթէ, որպէս զի եթէ ոստիկան մը դէմը ելլելով զինքը բռնէ, յայտարարէ թէ զրուս զնելու կը տանի: Եւ առ ի կատարեալ ապահովութիւն, հրազէններուն տաս երկու բերանն ալ առանց գնտակի կը պահէ: «Ո՛վ հերոսութիւն, ինչապուշութիւններ չեն գործուիր քու անունովդ»: Ապուշութեան անգերագանցելի բարձրութիւնը հոն է որայս տրիսմարութիւնները իբր զերմարդկային քաջագործութիւններ կը պատմուին ամենայն միամտութեամբ:

Մերիններն ալ սկսան հերոսութիւնը սորվիլ, իբր բանուկ արհեստ մը: Բայց գտնուեցան առաջնակարգ ճարպիկներ որոնք Հերոսի զերակատարութիւնը Արուստի վը բարձրութեանը հասցուցին:

Խոստովանիմ թէ ցնծութեամբ ծափած եմ այդ արհեստական հերոսներէն մէկ քանին: Թատերաբեմի մը վրայ զերասան մը երբ հերոսի մը մորթին մէջ մանելով

Հանդիսականները կը խանդավառվէ, ամէնքն ալ գիտեն թէ մօրթը փոխառութիւն է. բայց եթէ կեղծին տեղ ճշմարիտ հերոսը ներկայանար աչքերնուն, շատ ցուրտ պիտի թողուր զիրենք, եթէ ահաբեկ չընէր:

Այդ գեղարուեստական հերոսներէն մէկը ներկայացնեմ. թո՛ղ ընթերցողը ինքն իր վրայ փորձէ կեղծիքին հրապուրանքներուն հմայքը:

Այս տարի փետրուարին քանի մը օր Բարիզ անցուցի: Եւրոպականացեալ Հայ տիկնոջ մը այցելութեանս, խօսակցութիւնը երբ հայկական խնդիրներուն շուրջը կը դառնար, Տիկինը հրճուանքով իմացուց թէ «մէկ շատ մեծ քաջ մը եկեր է»: Անունը հաղորդեց, բայց զարմացաւ որ ինծի անծանօթ էր: Կտոր բրդուն տեղեկութիւններէն կը ռահեցի թէ հերոսութեան նոր տեսարան մը երևան եկած ըլլալու է, բայց ապահովաբար այս անգամ թիւրքիացի Հայու մը հանդէպ կը գտնուէինք, վասն զի պատմուած առասպելները սիրուն կը թուէին:

Իրիկունը հանդիպեցայ բարեկամի մը որ այդ միւսնոյն անունը ինքն ալ հարցուց ինծի: Բարեկամիս ծանօթ էին մեր ամէն անունները, բայց այս մէկ հատը չէր լսած: Հերոսին դիմագծերը նկարագրեց, ու Եզրիպտոսէն անցած ըլլալը իմացուց: Յիշեցի. քիչ մը առաջ դէմս ելած էր, քարառչտ կը ծախէր: Ալեկսանդրիա անգամ մը տեսած էի, բայց իբր շատ սովորական մահկանացու մը: Բարեկամս որ երիտասարդ է հետեւաբար ինծի չափ հակամէտ չէ ներողամտութեան, սկսաւ մոլեգնիլ:

— Տես ինչպէս ասոնք մեզի կը խայտառակեն Եւրոպացիներուն առջեւ, բաւա: Ու գորոցէն հանեց Ֆրանսերէն թուղթ մը, և ինծի տուաւ կարգալու:

Կենսագրական մըն էր որով Ֆրանսացի առաջնակարգ ազնիւ վաճառական մը, Հայ հերոսը Ֆրանսացի մեծանուն բանաստեղծի մը խնամքներոն կը յանձնարարէր: Վաճառականին ծանօթ Հայ երիտասարդ մը ներշնչուելով հերոսէն, ինքն ալ Ֆրանսացի ներշնչած էր: Յանձնարարականը ստորագրուելէ և յանձնուելէ առաջ, Հայը զայն սուրախութեամբ բարեկամիս վաւերացմանը ենթարկած էր: Բարեկամս տարակոյսներ ունենալով խոհեմութիւն համարած էր զայն իր ըզր պահել. եւ հիմակ օգտուելով իմ Բարիզ ներկայութենէս յիշողութեանս զիմով կ'ընէր:

Շիտակն ըսելով, քիչ մը նեղացայ այս զուգահիսութեանը համար: Յանձնարարականը հասնելով բանաստեղծին ձեռքը, թերևս անոր սրտէն հայկական վէպի մը կամ թատերգութեան մը նիւթը ցայտեցնէր զէպի ուղեղը:

Յանձնարարական թուղթը մեր ընթերցողներուն կը ներկայացնեմ իր ամբողջութեամբը: Հայ սրտերը թունգ հանող վիպակի մը պէս կրնան զայն կարգալ:



Սիրելիդ իմ ա՛լե....

«Կուզէի քեզի առաքել արծիւ մը բարձրաթուիչ, որ անդին, վարը, Արեւելք, վեհապանծ վէպ մը թողած է. և որուն պէտք է օգնես դուն իր ճարակը գտնելու համար. զի, շիտակը ըսելով, բաւական չէ որ միայն դիցազներգութեանց մէջ Հերոսներուն յարութիւն տաս, երբ արդէն անոնցմէ մէկը կ'ապրի:

«Թմրութեան անժպիտ ինչպէս և անխիղճ այս մեր ժամանակներուն մէջ, զո՛ւն այն իրաւունքովը զոր ունիս իբր Հոմերոսի յաջորդ, դուն բուռն աշակցութիւնդ կը պարտիս անոր:

«Պիտի կարծես թէ կը զառանցեմ. — ահա պատմութիւնս:

«Շահինեան — որ հայերէն «Արծիւ» կը նշանակէ, իր հայրենակիցներուն դէմ Թիւրքերուն վայրագութիւններէն զայրացեալ և ըմբոստացեալ, պատերազմ հրատարակեց Նորին Օսմանեան Վեհափառութեան դէմ, և սուրացու ի Լեան:

«Տասնըմէկ տարիներ — հիմակ հազիւ երեսնամենի է — մարտնչեցաւ: Ինք միայն պիտի կրնայ քեզի պատմել թէ Ալլահին պաշտողներէն որքանները անցուց համբաւաւոր այն կամուրջէն որ դերձանի մը բարակութիւնը եւ եթ ունի: Վերջիվերջոյ Թիւրքերը «ան, ճիւղը ինքն է» յայտարարեցին: Անխոցելին էր հոչակուած, ու այն ինչ երևնար, անոր ի տես Թիւրքերը ի փախուստ կը խուճապէին:

«Բարձրագոյն Դրան նախաւարները անոր զլուխը բերողին մեծահատուց վարձք խոստացան, տնտեսական կարգադրութիւն, վասն զի Շահինեան գէշ սովորութեան մը ունէր. վիլայէթներու հարկերը տանող սուբհանդակները թալանելով, ստակները կը բաժնէր հայկական քոմիթէներուն որոնք յեղափոխութիւնը կը սերմանէին եւ ապստամբութիւնը կը պատրաստէին:

«Խոստացուած փոխարինութիւնը որքան որ ալ հրապուրիչ մեծ փորձութիւն շարժէր, բայց և այնպէս ոչ ոք համարձակեցաւ երթալ Շահինեանի ուսերուն վրայ անոր զլուխը փնտռել — լեցունկէկ պղտիկ մարդ մը այդ Շահինեանը, անուշիկ գէմքով, որ ֆիզիքապէս արտակարգ նմանութիւն ունի քեզի հետ:

«Օսմանեան կառավարութիւնը, ա՛լ յուսահատած, առաջարկեց անոր, կեանքին չդպչել, եթէ ուզէր զօրս ելլել, երթալ արտասահման:

«Խոցեց ականջները Շահինեան:

«Ամբողջ Կիլիկիոյ ապստամբութիւնը պատրաստած էր. ահագնաբանակ առատութեամբ զէնք հայթայթած էր, ու թէև զինքը լրտեսող խուճանքով մը մէջ կը զբտնուէր, բայց եւ այնպէս յաջողած էր փամփուշտի

գործարան մը հիմնել, երբ զինքը իր քարտուղարը մասնեց :

«Վեց հազար հոգի ոտքի վրայ հանուեցան իրեն ղեմ. պարտաւորուեցաւ անձնատուր ըլլալ, յոյսը դնելով վարպետութեան մը վրայ զոր երկար ատենէ ի վեր պատրաստած էր :

«Իր հայրենակիցներէն մէկը որ քիչ մը իրեն կը նմանէր, գացած Ամերիկա հաստատուած էր իր անունը վր, եւ քաղաքացիութեան իրաւունք ստանալու պայմանագրեալ ժամանակը լրանալուն, իբր Ամերիկեան հպատակ հայրենիք վերագաճնալով, իր վաւերագրերը յանձնած էր Շահինեանի :

«Չորսկալուածին պէս, Շահինեան իր ենթադրեալ ամերիկեան քաղաքացիութիւնը յայտարարած էր. «Արք Ամերիկացի եմք» : Բայց օսմանեան իշխանութիւնը որ խարգախուծեանը տեղեակ էր, եղելութիւնը մէջտեղ հանեց :

«Սակայն Միացեալ Նահանգներու ղեսպանը որ գայն ճանչցած եւ գնահատած էր, շուզեց զինքը լքանել : Ուրիշ ղեսպաններու հետ միանալով յաջողեցաւ ընդունիլ տալ որ արտաքսուի միայն : Հարկ եղաւ սակայն որ կէս սարիոյ Լուսաւորչական, կաթոլիկ եպիսկոպոսները, Բողոքական հովիւրը, միւսիւման միջիթին երաշխաւոր ըլլան :

«Ամէնքն ալ ընդունեցան :

«Հոս գուարճալի մանրավէպ մը :

«Թիւրքերը, հակառակ իրենց խոստմանը, չէին ուզէր թող տալ որ թշնամիին փախչի, եւ որոշած էին զանիկա սպաննել, շոգենաւ մտնելէն առաջ : Ան ատեն Միացեալ Նահանգներուն իզմիրի հիւպատոսը ցամաք հանել տուաւ հոն գտնուող պահակ շոգենաւին նաւաստիներէն մէկ քանին :

«Շահինեան անոնցմէ մէկուն զգեստները առաւ. բայց իրեն ըսին թէ մօրուքը կտրելու է որպէս զի չի ճանցցուի :

— Դուրս կրնան կտրել, ընդդիմաբանեց Շահինեան, բայց անոնց համար եւ ոչ իսկ կրնամ թող տալ որ մագ մը խլեն ինէ :

«Ծովուն վրայ, ուստական նաւ մը զինքը առաւ եւ Ալեկսանդրիա տարաւ, ուրիկէ անցաւ Ֆրանսա :

«Հոս պատմութիւնս ալ վիպանման ըլլալէ կը դադրի :

«Ըսի թէ ա՛ն, տարիներով կերակրած էր հայ քօմիթեաներուն սնտուկը :

«Արտասահման հաստատուած հայ քօմիթէները թուի թէ զարմանալի կերպով կը նմանին մեր գործադուլի քօմիթէներուն : Գեղեցիկ կօշեր հրապարակ կը նետեն, իրարու հետ կը ջգզուրտին, ուրիշները կուռելու կը մղեն, եւ հանդիսատես կ'ըլլան անոնց իրարսպանութեանը :

«Թէ մէկ եւ թէ միւս քօմիթէն խնդրեց Շահինեանէն

իր կողմը անցնիլ, վասն զի իր յարուժը բարոյական ահագին ուժ մը պիտի տար իր նախապատիւ համարած քօմիթէին, բայց Շահինեան ամէնքն ալ ճամբու դրաւ, եւ շուզեց անոնցմէ ոչ մէկէն նպաստ ստանալ :

«Եւ օսկայն պէտք է ապրիլ. եւ կացութիւնը գրեթէ անելանելի է :

«Շահինեան տակաւին ֆրանսերէն չպիտեր. իրաւ է որ հրաշալի կերպով հրացան քաշել գիտէ, բայց, ինչպէս Պ. Քօնոսթան կը յայտարարէր Գամիլ Տրէֆիսի, մերկառավարութիւնները պէտք է հիմակ իրենց — անձամբ սպաննեն —, ու ասկէ գատ, կարծեմ թէ Շահինեան յանձն պիտի չ'առնէր ուրիշներուն հաշուին համար աշխատիլ :

«Սակայն բացառիկ յատկութիւն մը ունի. քանի մը երկվայրկեանի մէջ ձիու մը ինչ ըլլալը կը հասկնայ, անոր յատկութիւնները, տարիքը, պակասութիւնները եւ այլն. քիչ մը կը նմանի այն մարդուկներուն որոնք տարին 100,000 ֆրանք կը վաստակին, պարզապէս գնահատելով սպանդանոցներուն եզերը :

«Ուրեմն պէտք է որ, սիրելի բարեկամս, յանձնարարես Շահինեանը մեծ ասպասէրի մը, օրինակի համար Պ. Մի... կամ ո՛ր եւ մեծ ընկերութեան մը, ինչպէս՝ Օմիպուսներունը, որպէս զի ձիերու գնումին օգնէ : Ձի գնող մը երբ Շահինեանը հետը ունենայ, կրնայ ապահով ըլլալ որ երբեք պիտի չխաբուի : Սկիզբները իր հայրենակիցներէն մէկը իբր թարգման պիտի ծառայէ իրեն, եւ շատ սուղ պիտի շնտարի. Լէտի (մանչուկ) մը ամուսկանը կը բաւէ :

Այս հաճոյքը ըրէ ինծի, սիրելիս Ժ... , գործ մը գտիր այս Ֆրա Տիափօլոն, որուն կերպարանաւորութիւնը, համաձայն է ինծի, շատ սովորական չէ մեր ԺԹ դարուն վերջը : Ե՛րբ պէտք է որ գայն քեզի զրկեմ : Իրեն պիտի ընկերանայ քարտուղարս որ ինքն ալ հայ է. ան է որ գայն ինծի ծանօթացուց : Ըսէ նաև թէ, երբ կրնամ քեզի տեսնել, ըսելու ա՛յնքան բաներ ունիմ :

Կանխաւ շնորհակալութիւն
Քոյդ

* * *

Վիպակը բանաստեղծօրէն յօրինուած է, կազմուածքը անթերի մինչեւ իզմիրի հանդերձափոխութեան միջադէպը : Հոն տարակուսանքը կը սկսի : Սակայն կարծեմ թէ ինծի հետ ընթերցողներն ալ ներողամիտ պիտի գտնուին, վասն զի այլապէս անհնարին պիտի ըլլար քշել՝ «մահը լաւագոյն համարելու քան թէ մօրուքէն թել մը զոհելու» վեպը : Օր մը մեր թատրերգակ բանաստեղծներն այս պատասխանէն պիտի օգտուին Քոնստանդուպոլսի տեղադրութեան մը համար :
Ինչ է է, «ամէն գործի վախճանն է գովելի» ըսած

են : Վէպ—յանձնարարականը փոխանակ Ֆրանսացի բա- նաստեղծին, եկաւ ինկաւ հայ թրոնիկագրին ձեռքը, ու պիտի փարատէ տարակոյսներն անոնց որ Յեղափոխու- թեան Մակարոյժները ապերասան երեակայութեան ժայթ- քում կը կարծէին : Ամէն գործի վախճանն է գովելի :



Ու անդին բանալը կը տանջուի, աքսորավայրը կը հիւժի, կուտի զաշտին վրայ կ'իյնայ, Հայ-Գաղափարին նահատակ հերոսը, անձայն անխօսուի . նման ցորենի հատին որ իր լոբի մըլիկ մահովը մարդկութիւնը կ'ապ- բեցնէ : «Եթէ հատն ցորենոյ անկեալ յերկիր ոչ մեռա- նիցի ինքն վասն ինքեան միայն կայ, իսկ եթէ մեռանիցի՝ վասն աշխարհի :

Ինքն ալ ըիմակ ցորենի հատիկ մը, բարեկամս որուն հետ այս Եահիւնեան զաւեշտավէպը կը կարգայինք, ա՛ն՝ զայրոյթով, ես՝ ծիծաղով :

Եւ սակայն տխուր չեմ : Աչքս հեռաւոր արտերուն վրայ է . ցորենին ծլումը կ'ընդնշմարեմ հոն :

ՀՐԱԶԴԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Քաղաքական աշխարհը օրէ օր աւելի կարեւորութիւն կ'ընծայէ այն պայմանագրութեանը զոր շինական խընդ- րին կարգադրութեանը համար Անգլիա և Գերմանիա Լոն- տոն ստորագրեցին : Այդ համաձայնութիւնը նոր Երրեակ Նիզակակցութեան մը կազմութիւնը հաւանական են- թադրել կուտայ . Քանի մը ամիս առաջ Երբ Պ. Չէմ- պըրլէն յանկուօ—գերման—ամերիկեան նիզակակցութեան մը վրայ կը խօսէր, յայտարարութիւնը թերեհաւատու- թեան ժպիտով կ'ընդունուէր . բայց հիմա իրողութիւն- ները Եւրոպայի կը թելադրեն աւելի լրջօրէն կարեւորու- թիւն ընծայել Անգլիոյ ժողովրդական նախարարին ազ- զարարութեանցը :

Եւրոպայի մամուլին մէկ մասը այժմ այդ նոր Երր- եակ—Նիզակակցութեան կազմութիւնը կը գուշակէ կարգ մը անսովորութիւններով զոր կ'ամփոփենք :

Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահ Պ. Լուպէ երբ նոյեմբեր Աին Լիոն կը գտնուէր, հանգուցեալ Քանոնի արձանին կանգնումը հանդիսաւորապէս տօնելու համար, Չարը առիթէն օգտուելով հեռագիր մը ուղղեց և շեշտեց Ֆրանքեռուս բարեկամութիւնն ու դաշնակցութիւնը :

Ֆրանսական մամուլին լրջամիտ մասը շատ կարե-

ւորութիւն ընծայեց այս ցոյցին, Վասն զի երևան կու- գար ճիշտ այն պահուն երբ Պետութեանց նոր համա- խըմբում մը կը յայտնուէր, նպատակ ունենալով Մայ- րագոյն—Արևելքի մէջ Ֆրանքեռուս ազդեցութիւնը հա- կակշռել : Վերջի ատեններս Ֆրանսայի և Ռուսիոյ յա- րաբերութիւնները ցրտացած կը թուէին այն երկդիմի ըն- թացքին պատճառաւ որուն կը հետևէր Բեկրպուրկի դահ- լիճը շինական տաղնապին աթիւ : Բայց Չարին նոյեմբեր Աի հեռագիրը կը հերքէ այդ կասկածները :

Ռուսական կառավարութեան առաջադրութիւնն էր Գերմանիան իրեն մօտեցնել և Ֆրանսան ալ մէկտեղ ածնելով Երրեակ—Նիզակակցութիւն մը կազմել . բայց այս ծրագիրը չյաջողեցաւ, զի Վիլհելմ կայսրը ըմբռնեց թէ Գերմանիա նոր նիզակակցութեան մէջ կարող պիտի չըլլար գերակշիռ ազդեցութիւն բանեցնել : Միևնոյն ա- տեն ալ հին Երրեակ—Նիզակակցութիւնը իր վախճա- նին մօտեցած կ'երևի : Աւստրիա և Իտալիա Գերմանիոյ շատ անճարակ աջակիցներ հանդիսացան շինական խընդ- րին մէջ : Ուրեմն Գերմանիա պարտաւոր էր Պետութեանց ուժերու նոր համախմբում մը ստեղծել, վասն զի միս մինակ մնալով չի կրնար քաղաքական գորեղ ազդեցու- թիւն ունենալ :

Այս միջոցին Անգլիան ալ ծանր կացութեան մատ- նուած կը թուէր : Հարաւային Ափրիկէի պատերազմը շատ տկարացուցած է զինքը, եւ հարկ է որ զինուորական մեծ ուժ մը աջակցի իրեն որպէս զի կարենայ իր արտաքին քաղաքականութիւնը գործադրել : Եւ ահա զէպքերու բը- նական բերումովը Գերմանիա և Անգլիա իրարու կը մօ- տենան, ու կ'ըստորագրեն այն պայմանագիրը որ Չի- նաստանի խնդրին մէջ երկու պետութեանց կատարեալ հա- մաձայնութիւնը կ'ապահովէ :

Այդ համաձայնութիւնը ուղղակի հակառուսական էր վասն զի անհնարին պիտի ընէ Ռուսիոյ գրաւել Ման- չուրիան . հակառակ պարագային ամենածանր կացութիւն մը պիտի ստեղծուի : Իրաւ է որ այդ միևնոյն պայմանա- գրութեամբ Անգլիա եւս կը պարտաւորի Եանկ—Յէի վրայ իր յաւակնութիւններէն հրաժարիլ, գոնէ առժամապէս : Բայց Սուրպէրիի դահլիճը նկատողութեան աննելով Անգ- լիոյ արդի տկարացումը, յանձն կ'առնու անգործ մնալ . բայց միևնոյն ատեն անգործութեան կը զատապարտէ Ռուսիան ալ :

Բայց ենթադրենք թէ, ստոյգ ըլլայ Թայվզի այն հա- ւաստումը որ ինչ ըլլայ չըլլայ Ռուսիա պիտի տիրէ Ման- չուրիոյ . այս պարագային Գերմանիա եւ Անգլիա ամրա- պէս պիտի միանան իրենց շահերը Չինաստանի մէջ պաշտպանելու համար . ինչ որ սովորական լեզուով կը նշանակէ թէ, շինական կայսրութիւնը բաժնելու օրը հա- թած պիտի ըլլայ . ու Գերմանիա եւ Անգլիա իրենց հա- մաձայնութիւնը Նիզակակցութեան վերածելով պիտի կա- ղողանան Հպաշտպանել իրենց շահերը : Այդ լ'օրը Միաց-

եալ Նահանգըրերն ալ հաւանօրէն պիտի յարին Անկլո-գերման նիզակահցութեան :

Այդ հաւանականութիւնը ստուգութեան կը մօտենայ երբ կը տեսնենք այն մեծ գոհունակութիւնը զոր ամբողջ Անգլիա զգաց իմանալով որ Պ. Մաք Քինլի Միացեալ-Նահանգներուն նախագահ ընտրուած է նորէն : Այս առթիւ Լոնտոնի մամուլին յայտնած ուրախութիւնը կը հաւաստէ թէ անգլիացիները ինչ մեծ յոյսեր դրած են Պ. Մաք Քինլիի վրայ :

Այս Երրեակ-Նիզակահցութեան կազմութիւնը Պ. Չեմպրլէնի երազն էր . իր յանցանքն այն էր որ զայն կը մեկնէր այնպիսի պահու մը երբ տակաւին չէր ընդնշմարուէր Հնարաւորութիւնը այն դէպքերուն որոնք այս վերջի ամիսներս այնքան զօրաւոր մղում մը տուին աշխարհատարածման քաղաքականութեան : Ինչ որ անցեալ տարի անիրականալի կը նկատուէր, արդէն այս տարի իրականալու վրայ է : Եւ որովհետեւ պետութեանց նոր համախմբումի մը հաւանականութիւնը գրեթէ ստուգութեան կը մօտենայ, ուստի եւ այս պատճառաւ ալ առաջնակարգ կարևորութիւն կ'ստանայ Չարլին Պ. Լուպէի ուղղած հեռագիրը, որ Ֆրանքլոու դաշնակցութեան ամբողջութեամբ կ'ապացուցանէ :

Կը տեսնենք ուրեմն թէ մօտաւոր ապագայի մը մէջ երկու զօրեղ համախմբումներ իրարու դէմ պիտի կանգնին . մէկ կողմը՝ Ռուսիա և Ֆրանսա, միւս կողմը՝ Անգլիա, Գերմանիա և Միացեալ Նահանգները : Ահեղ մարտընչումը պիտի սկսի երկու համախմբումներուն միջեւ, որոնցմէ մին տեղի տալու պիտի հարկադրուի : Անշուշտ կարելի չէ գուշակել ի՞նչ որո՞նք պիտի մնայ յաղթանակը . բայց ինչ որ ալ ըլլայ, յուսանք թէ մարտնչողները խաղաղութեան կողանին վրայ կանգնած մնան :

Այդ յոյսը ներքի է ունենայ բայց ոչ այն ապահովութիւնը զոր երէկուան Երրեակ-Նիզակահցութիւնը մինչև հիմակ աշխարհի կը պարզէր : Անոր մէջ իրապէս ահեղ զօրութիւնը Գերմանիան ունէր, մինչ Աւստրիա և Իտալիա իրենց տկարութեամբ կը նեղէին ե Գերմանիան : Միացեալ Ֆրանսա եւ Ռուսիա իրենց դէմ չէին տեսներ իրենց ուժը գերազանցող նիզակահցութիւն մը : Բայց եթէ Անգլիա, Գերմանիա և Միացեալ Նահանգները զաշնակցին, ան ատեն աշխարհիս ցամաքային և ծովային երեք ահեղագոյն ուժերը մէկ կողմը, եւ երկուքը միւս կողմը պիտի գտնուին : Կացութիւն մը որ սպառնալից է խաղաղութեան համար :

Ուրիշ վտանգ մը եւս : Մինչեւ հիմակ Անգլիա ոչ մէկ նիզակահցութեան մէջ մտած ըլլալով, մեծապէս կը նպաստէր ուժերու հաւասարակշռութեան պահպանումին . երկու համախմբումներէն մին եթէ կողուստիական փորձութիւն ունենար, Անգլիա յարելով հակառակորդ կողմին, կը չէզոքացնէր պատերազմասեր Նախահեծութիւնը : Հիմակ այդ իրաւարարը ինքն ալ նիզակահցութեան մը

յարեալ պիտի ըլլայ : Չի հայ ուրիշ մեծ պետութիւն մը որ իր բարերար ազդեցութիւնը ի գործ դնէ ակնածանքի մէջ պահելու համար ով որ խաղաղութիւնը վրդովելու հակամտի :

Անշուշտ տակաւին ճշգրտապէս յայտնի չէ թէ նոր Երրեակը պիտի կազմուի թէ ոչ : Կազմութեան պարագային մեր մտածութիւնը այն պիտի ըլլայ թէ մեր Արեւելեան խնդրին մէջ ինչ քաղաքականութեանց պիտի հետևին երկու համախմբումները : Կրնանք շատ հաւանական համարել որ Ռուսիոյ չէզոքացումը անխուսափելի հետևանքը պիտի ըլլայ նոր Երրեակին կազմութեան : Արգարև ո՛չ Գերմանիա, ո՛չ Անգլիա, և ո՛չ ալ Ամերիկա օսմանեան կայսրութեան քայքայումին ցանկացող են : Ֆրանսա եւս որքան որ ալ Ռուսիոյ նիզակահց, բայց և այնպէս Թիւրքիոյ քայքայումը իրեն շահերուն ձեռնտու չէ, վասն զի ժառանգութեան մեծագոյն և գեղեցկագոյն բաժինը Ռուսիա պիտի վայելէ, միշտ ի վնաս միւս պետութեանց :

Կ'ենթադրուի իսկ թէ Թիւրքիա եւս պիտի մասնակցի նոր Երրեակին . անհաւանական ենթադրութիւն : Թիւրքիա մեծ պետութեանց խնամակալութեանը սահմանուած կը թուի քան թէ անոնց ընկերակցութիւնը վայելելու : Եւրոպական և ամերիկեան նորանոր համախմբումները եթէ իրականանան, օսմանեան կայսրութեան պահպանումին նորագոյն և մեծագոյն երաշխաւորութիւնը պիտի ընծայեն : Ահա զխաւորապէս այս տեսակէտով է որ միջազգային քաղաքականութեան զանազան երևոյթները մեր շաղկապութիւնը սաստկապէս կը գրաւեն :

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ . Կ . Պոլսէն Թայմզիւն կը հետազոտի թէ Հայոց Պատրիարքարանը հասած տեղեկագիրներուն համեմատ Մոռլի և Վանի Հայոց վիճակը տարօրինակ կերպով վատարացած է : Քիչորտերը հայ գեղացիներուն հռանճքը, ոչխարը, եգը, տան կարասիքը աւարի տալով ինչ որ կայ ամեկքն ալ առեր տարեր են : Բազմաթիւ գեղացիներ տեօքոսթեկ մեռեր են : Աղջիկ թէ կիւն անխտիր իրենց կենդանակ պատռախ մէջ կը նախատռախեն : Մոռլի առաջնորդը այս տեղեկութիւնները հաղորդելով կը յայտարարէ որ, թէ՛ Վան և թէ՛ Մոռլ հայերը կ'ըղձան ընդհանուր ջարդի մը որպիս գի կոտորտռախեն, վերնան, ազատին :

Վանէն անգլիացի կիւն մը Թայմզիւն կը գրէ թէ Հայերը ծայրայեղ տառապանքներ կը կրեն : Այս տարի, կ'ըսէ, հռանճքը առատ եղաւ, բայց անա կառավարութիւնը այս բարեկեպ պատեհութեանէն օգտուելով ըսկառ անեղեղ աղքատ գեղացիները : Հարկերը հաւաքե-

չոս համար: Հին տոբքերը կը պահանջուին: Տեղական իշխանութիւնը գեղացիներուն ձեռքին բռնաբեւութիւն կը յափշտակէ ցորենը չնչին գինով: Չափը 10 դարձուց հաշուելով կ'առնէ ցորենը գեղացիին ձեռքին, միևնչեւ անհիւս իր ցորենը քաղաք տանելով չափը 30 դանկեանի կրնայ վաճառել: «Այս երկրին մէջ առատ հունձք մը ժողովրդին համար բարիք մը չի համարուիր:»

Վայրագ խժոճութեանց քանի մը դեպքեր կը յիշէ:

Նոր գորակոցներ շինելու համար թիւրքերը կ'երբան Հայոց ծառերը կը կտրեն կը բերեն: Երբ ծառերուն տերերը բողոքեն, ծեծի և տանջանքի կ'ենթարկուին: Այսպէս, հայ մը ճայն բարձրացուցած ըլլալուն համար թիւրքերը գայն սաստկապէս գանակոծելի յետոյ ծառը կ'ապեցին: Նմանապէս ուրիշ երկու հայ ալ բողոքած, ըլլալով թիւրքերը զանոնք հացին տաք բոնիրը խորեցին, ուր մարած ինկած մնացին: — Թղթակիցը կը նկարագրէ թե բոնիրը ինչ է:

Հայ գեղացի մը 9 ոսկի տոբք վճարելու համար ոչխարները քաղաք կը տանի կը վաճառէ, և տակը վրան ետ կը դառնայ, քանի մը քիչտոբքու հետ ընկերակցութեամբ: Զամբան հեծեալ քիչտոբք առնց կը հանդիպին, կը կոչուտեն վրանին եղածը, լոյն իսկ զգեստներին կ'առնեն, թէ հայուն և թէ քիչտոբքուն: Եւ այս առազակութեամբ չքառականալով, կ'առնեն խեղձ մարդիկը կը տանին յետան մը գրոշար և խոշոր քարերու ներքև կը բաշտեն: Այս դժբաղդներին մէկը սակայն կը յաջողի ինքզինքը ազատել, և միասնեքն ալ կը հանէ քարերուն ներքևէն: Ամենքն ալ մերկ մարմնով կոզգան մտակայ գեղ մը ուր վրանուն զգեստ կը ձարուի, և կ'երբան իմաց տալ իշխանութեան, որ առազակները փնտսելու ետեւէն է եղեր:

ԳՐԱԿԱՆ. Պ. Արշակ Զօպանեան Բարիգի Մերքիար տը Թրանս գրական հանդեսին նշանակելի թիւին մէջ ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Նարեկին և Նարեկացիին վրայ: Անհիտի խմբագիրը խորին հետազոտութեամբ և քանադասական խանդավառութեամբ Եւրոպայի կը ծանօթացնէ մեր մեծ քանաստեղծը որ անս տասը դար է ամեն հայոց սիրտ գրաւած է, թեւ իր ոճը խորին: Պ. Զօպանեան Նարեկին քանի մը կտորներ սոյն յօդուածին մէջ ֆրանսերէնի բարգմանած է, մեծ յաջողութեամբ:

Նոր-Կեանքի մէջ այս տարի հրատարակուած վրէժ միպակը յոնարեկի բարգմանուելով հրատարակուեցաւ Կիպրոսի յոնարեկի բերթի մը մէջ:

ՄԱԿԵՆՈՒՆԻԱ. Դոտար կասկածելով որ Մակեդոնացի յեղափոխականները Եւրոպայի Մայրագոյն-Արեւելք ունեցած գրադուսկն օգտուելով գոտցէ կը փորձեն Մակեդոնիոյ մէջ յեղափոխական շարժում առաջ բերել, հրահանգ տուած է Սելանիկի և Մանասթրի կոռակալներուն ժայրայեղ տշարչութեամբ հսկել, և ի հարկին

խիստ միջոցներ ալ գործադրել: Սելանիկ կառավարութիւնը անգլիական բոլորտունէն գրաւել է Մակեդոնիան կան քովիթիին ուղղուած նամակներ ու գրութիւններ: Պոլիս ուր Պոչկար ձերբակալուներ եւ բանտարկուներ են, իրր Մակեդոնական քովիթիին անդամ: Դոտար Էկզարխէն խնդրած է յորդորել Պոչկարները ո' և է շարժուակ ձեռնբափ մնալու:

ՊԱՏԻԻ ՄԸ ԳԻՆԸ

Հաւանօրէն ընթերցողները յիշելու են թէ Պալեան անուն անձ մը, որ Լոնտոնի Քաղաքային Խորհրդին ալ անդամ էր, մարտին խոշոր գումար մը գողնալով անբռնութեամբ: Այս առթիւ թայմզ հրատարակեց ոստիկանութեան ծանուցում մը, որուն մէջ յիշուած էր նաև Պալեան եղբոր անունը, «իբր ոստիկանութեան քաջածանօթ անձ մը:» Պալեան եղբայր թայմզի դէմ վատահամբաւութեան դատ բացաւ: Լոնտոնեան մեծ թերթը դատապարտուեցաւ հարիւր ոսկի փնտի հատուցման, եւ դատական ծախքերու վճարումին:

Անգլիական օրէնքին համեմատ օրաթերթերը պարտաւոր են հրատարակել ոստիկանութեան կողմէն հաղորդուած ծանուցումները, երբ պաշտօնապէս պահանջուի: Ներկայ պարագային մէջ թայմզ չկրցաւ հաստատել թէ այդ հրատարակութիւնը իրմէն պահանջուած ըլլայ: Ոստիկանութիւնը ազդարարութիւնը զրկած է եղեր առ ի տեղեկութիւն միայն:

Իբրև հայ կը ցախնք որ Պալեան եղբայր, որուն անունը մեզի անծանօթ է, իր եղբորը ոճիւր անգլիական հասարակութեան վերջիցնեւու առիթ մը ստեղծեց: Իր ցեղը թիչ մը սիրող հայը պիտի ուզէր Անգլիոյ մոռցնել տալ հայու մը այս անպատիւ գործը:

Շատ կը ցախնք նաև որ Պալեան եղբայր այսպիսի շնչին գումարի մը համար դատաստանի բաշտելով օրէնքին խտուութեանը ենթարկել թայմզի պէս թերթ մը, որ այնքան մեծ ծառայութիւններ մատուցած է հայ դատին, և կը մատուցանէ:

Ապահով ենք որ ամբողջ հայ ժողովուրդը մեզի համարիտ է, և օրտէն կը դատապարտէ Պալեան եղբայրը:

ՀԱՍՅԷ ԵՒ ԲԱԺՆԵՓԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսուս ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք: Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ՝

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W